**Ձև N 2**

**_____էկոնոմիկայի նախարարություն_____**
**(ՀՀ պետական կառավարման համակարգի մարմնի անվանումը)**

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
## 2024 թվական

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## 2021-2026ԹԹ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| ծրագրի հերթական համարը | նպատակը | միջոցառումների անվանումները | միջոցառումների իրականացման արդյունքները | միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Տնտեսական աճի ապահովում՝ 7-9% | 1.1 Տնտեսական զարգացման քաղաքականության մշակում և իրականացում «Տնտեսական զարգացման քաղաքականությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում | ՀՀ կառավարության կողմից ընդունվել է 20.07.2023թ Հայաստանի Հանրապետության տնտեսական քաղաքականության 2023-2030 թվականների հայեցակարգը հաստատելու մասին» N 1238-Լ որոշումը: | | |
| | | 1.2 Հանրային ներդրումների կառավարման բարելավում | 1. Հանրային ներդրումների կառավարման համակարգի շրջանակում հավաքագրվել և ներկայումս իրականացման ու մշակման տարբեր փուլերում են գտնվում 60 հանրային ներդրումային ծրագիր:<br><br>2. 2024 թվականի ընթացքում նախաձեռնվել և իրականացվել է Հանրային ներդրումային կոմիտեի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 2 նիստ, որոնց ընթացքում քննարկվել են 2 հանրային ներդրումային ծրագրի նախագծի տեխնիկատնտեսական ուսումնասիրություն և 6 նոր հանրային ներդրումային ծրագրի նախագիծ:<br><br>3. ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի հունիսի 10-ի N 1505-Լ հրամանով հաստատվել են Հանրային ներդրումային ծրագրերի գնահատման և պետություն-մասնավոր գործընկերության ձևաչափով հանրային ներդրումային ծրագրերի իրականացման հնարավորության վերաբերյալ թեստավորման ուղեցույցները:<br><br>4. ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի սեպտեմբերի 11-ի N 2284-Լ հրամանով հաստատվել են Հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի տեխնիկատնտեսական ուսումնասիրության իրականացման ուղեցույցը, մեթոդաբանական հավելվածը և տեխնիկատնտեսական ուսումնասիրության որակի գնահատման ստուգաթերթը: | | |
| | | 1.4 Պետություն-մասնավոր գործընկերության զարգացում, «Պետություն-մասնավոր գործընկերության ընթացակարգը, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծման և կառավարման կարգը հաստատելու, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային ծառայությունների ոլորտները, պետություն-մասնավոր գործընկերության | Պետություն-մասնավոր գործընկերության օրենսդրական դաշտի ամբողջականացման շրջանակում կատարվել են փոփոխություններ և լրացումներ ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի փետրվարի 14-ի N 363-Ա հրամանում, արդյունքում՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի ապրիլի 11-ի N 1022-Ա հրամանով հաստատվել են Պետություն-մասնավոր գործընկերության (այսուհետ՝ ՊՄԳ) պայմանագրի կառավարման, ՊՄԳ շրջանակներում շուկայի հետ նախնական հաղորդակցման, ՊՄԳ շրջանակներում մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի և ՊՄԳ ծրագրի՝ փաստացի արդյունքների գնահատման ուղեցույցները: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ստորաբաժանումը, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության ձևը և ներկայացման ժամկետը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N 1241-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի հաստատում | | | |
| 2 | Արտադրողականության աճ և գործազրկության կրճատում<br><br>Արտադրողականություն 12$ ՀՆԱ/մարդxժամ; գործազրկություն՝ <10% | 2.1 Ռազմավարական և առաջնահերթ ոլորտներում տեխնոլոգիական արդիականացում և բիզնես պրոցեսների օպտիմալացում | Կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N355-Լ որոշման 1-ին հավելվածով հաստատված Արտադրողականության խթանման նպատակային ծրագրի նպատակն է բարձրացնել կազմակերպությունների արտադրողականությունը: Նպատակային ծրագրի մեկնարկից (2022 թվականի մարտ) մինչև 2024 թվականի դեկտեմբերի 30-ը կնքվել են 7087 պայմանագրեր, որոնց շրջանակում ձևավորված վարկային/լիզինգային պորտֆելը կազմում է 365,5 մլրդ ՀՀ դրամ: 2024 թվականի ընթացքում ծրագրի շրջանակում սուբսիդավորման գումարը կազմում է 16,1 մլրդ ՀՀ դրամ: | | |
| | | 2.2 Աշխատաշուկայում բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավում տեղական ընկերություններում | Կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N355-Լ որոշման 2-րդ հավելվածով հաստատվել է Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման նպատակային ծրագիրը, որի նպատակն է բարձրացնել կազմակերպությունների արտադրողականությունը՝ տնտեսավարողներին խթանելով իրենց աշխատանքներում ներգրավել բարձր որակավորում ունեցող մասնագետների: Նպատակային ծրագրի մեկնարկից (2023 թվականի հունվար) մինչ օրս ստացվել է 763 հայտ՝ 58 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կազմակերպություններից: 2024 թվականի դեկտեմբերի դրությամբ փոխհատուցում ստանում են 44 կազմակերպություններ: 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ծրագրի աջակցության գումարը կազմել է շուրջ 3,1 մլրդ. ՀՀ դրամ: | | |
| | | 2.3 Տնտեսության մեջ թվային գործիքների կիրառման խթանման հայեցակարգի հաստատում | Էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 1932-Ա հրամանով հաստատվել է Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների կողմից թվային գործիքների կիրառման խթանման հայեցակարգային մոտեցումները, որի նպատակն է նպաստել ՓՄՁ թվային հասունության և արտադրողականության մակարդակների բարձրացմանը, ներդնել թվային գործիքների խթանման և խրախուսման մեխանիզմներ: ՓՄՁ-ների թվայնացման արդյունքում հիմնարար նախադրյալներ կստեղծվեն մի շարք այլ ոլորտների կարողությունների արագ զարգացման, արդիականացման, արտադրված հայկական ապրանքների ու մատուցվող ծառայությունների մրցունակության բարձրացման, դրանց արտահանման աճի խթանման և տնտեսական աճին նպաստող կարողությունների զարգացման համար:<br>Կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N355-Լ որոշման 1-ին հավելվածով հաստատված Արտադրողականության խթանման նպատակային ծրագրի շրջանակում 2024 թվականի հունվարի 27-ից օժանդակություն է տրամադրվում այն տնտեսավարողներին, ովքեր վարկ/լիզինգ են ներգրավում թվային ծրագրերի կամ հարթակների ձեռքբերման նպատակով: Օժանդակությունը տրամադրվում է վարկի/լիզինգի տարեկան տոկոսադրույքի սուբսիդավորման ձևով: | | |
| 3 | Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում | 3.2 Ընկերություններում արդիական կորպորատիվ կառավարման | 2024 թվականի մայիսի 22-ի ՀՕ-237-Ն օրենքով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարված լրացմամբ սահմանվել է Կորպորատիվ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Ներդրումներ/ՀՆԱ՝ 25%, ՕՈՒՆ/ՀՆԱ՝ 6% | համակարգերի ներդրման խթանում | կառավարման կանոնագրքի հասկացությունը, ինչպես նաև էկոնոմիկայի նախարարին լիազորություն է վերապահվել հաստատել այն:<br>Էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի հուլիսի 30-ի հրամանով հաստատվել է ՀՀ նոր կորպորատիվ կառավարման կանոնագիրքը, որը հիմնված է ՏՀԶԿ 2023 թվականի վերանայված կորպորատիվ կառավարման սկզբունքների վրա:<br>2024 թվականի օգոստոսի 30-ին ուժը կորցրած է ճանաչվել նախորդ կորպորատիվ կառավարման կանոնագիրքը հաստատող Կառավարության որոշումը, ինչի արդյունքում ուժի մեջ է մտել նոր կորպորատիվ կառավարման կանոնագիրքը:<br>Էկոնոմիկայի նախարարության կողմից Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի, Ասիական զարգացման բանկի հետ համագործակցությամբ 2024 թվականի սեպտեմբերի 24-ին կազմակերպվել է «Հայաստանի նոր կորպորատիվ կառավարման կանոնագիրքը. Կիրարկման և հարկադրանքի առանձին հարցեր» խորագրով աշխատաժողով:<br>2024 թվականի սեպտեմբերի 25-ին, նոյեմբերի 28-ին և 29-ին կորպորատիվ կառավարման կանոնագրքի կիրարկման առանձին հիմնախնդիրների վերաբերյալ քննարկումներ, սեմինարներ են իրականացվել նաև պետական մարմինների, այնպես էլ ցուցակված ֆինանսական և իրական հատվածի ընկերությունների հետ: | | |
| | | 3.3 Գործարար միջավայրի բարելավման ծրագրի մշակում և իրականացում, «Գործարար միջավայրի բարելավման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում | | «Հայաստանի Հանրապետության գործարար միջավայրի բարելավման 2024-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | (այսուհետ՝ Նախագիծ) 2024 թվականի մայիսի 13-ին քննարկվել է Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստում: Քննարկման արդյունքում Նախագիծը հանվել է օրակարգից՝ առաջարկելով Էկոնոմիկայի նախարարությանը ծրագրի ներկայացման վերջնաժամկետը երկարաձգել մինչև 2024 թվականի տարեվերջ՝ քննարկման արդյունքների հիման վրա ամբողջական վերլուծություն կատարելու նպատակով: Նախագծի լրամշակված տարբերակը ներկայումս ներկայացվել է շահագրգիռ մարմինների քննարկմանը՝ կարծիքներ հավաքագրելու նպատակով: Միևնույն ժամանակ նախատեսվում է Նախագծով ներկայացված միջոցառումները լրամշակել՝ Համաշխարհային բանկի Business Ready զեկույցի արդյունքների հիման | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վրա, որը Հայաստանի Հանրապետության համար հրապարակվելու է 2025 թվականի սեպտեմբեր ամսին: | |
| | | 3.5 Համագործակցություն միջազգային կարևոր ցուցիչներ և ռեյտինգներ հրապարակող ընկերությունների հետ | **Միջոցառումը շարունակական է.**<br>2022-2023 թվականների ընթացքում մշակվել և միջազգային վարկանիշային FITCH, MOODY'S և STANDARD & POOR'S (S&P) կազմակերպություններին է տրամադրվել «Հայաստանի տնտեսական հեռանկարներ» տարեկան 4 զեկույցներ (այսուհետ՝ Զեկույց):<br>**2024 թվականի ընթացքում** տրամադրվել է 4 զեկույց՝ 2023թ. տարեկան և 2024թ. 3 եռամսյակների: | | |
| 4 | Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում,<br><br>ՓՄՁ-ի մասնաբաժինը ՀՆԱ-ում՝ 55% | 4.1 Նորարարական նախաձեռնությունների հայեցակարգի հաստատում, հաստատումից հետո ծրագրերի մշակում և իրագործում | Էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի հունվարի 31-ի թիվ Հ/281-2024 հրամանով հաստատվել է «Նորարարական նախաձեռնությունների հայեցակարգը», որի նպատակն է ստեղծել արդյունավետ գիտելիքահենք տնտեսական համակարգ, որը կնպաստի ձեռներեցության խթանմանը, գիտելիքի ստեղծման և տարածման համար բարենպաստ միջավայրի, դրանց համար անհրաժեշտ ռեսուրսների և ենթակառուցվածքների հասանելիության ապահովմանը:<br>Սահմանված նպատակներին հասնելու համար հայեցակարգով սահմանվում են գիտելիքահենք տնտեսության զարգացման քաղաքականության հիմնական ուղղությունները: Յուրաքանչյուր ուղղության համար մատնանշվում են այն առանցքային նախաձեռնությունները, որոնց իրագործումը կնպաստի գիտելիքահենք տնտեսության արդյունավետ համակարգի ձևավորմանը: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 4.2 Մասնավոր հատվածի մասնագիտական կարողությունների զարգացում | 4.2 կետի մասով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից, որպես համակատարող, կատարվել են հետևյալ աշխատանքները.<br>Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024 թ. փետրվարի 7-ի թիվ 07-Ն հրամանով հաստատված «Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների ատեստավորման հանձնաժողովների ձևավորման, դրանց գործունեության և ատեստավորման ենթակա մանկավարժական աշխատողների վերապատրաստման և ատեստավորման կարգի» և ՀՀ կառավարության 2024 թ. դեկտեմբերի 5-ի «Մասնագիտական ուսումնական հաստատությունների ատեստավորված կամ տարակարգ ստացած մանկավարժական աշխատողների դրույքաչափի փոփոխության և հավելավճարի սահմանման կարգը և չափը հաստատելու մասին» N 1912-Ն որոշման՝ մանկավարժ աշխատողները այդ թվում՝ մասնավոր ոլորտի մասնագետները կարող են մասնակցել վերապատրաստման դասընթացներին և ատեստավորմանը և ցուցաբերած արդյունքների հիման վրա ունենալ դրույքաչափի փոփոխություն և աշխատավարձի հավելավճար:<br>«Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքը ամբողջությամբ ընդունվել է ԱԺ երկրորդ ընթերցմամբ 2024թ. մայիսի 22-ին: ՀՕ-250-Ն օրենքն ուժի մեջ է մտել 2024թ. հունիսի 24-ին:<br>ՀՀ վարչապետի 10.10.2024թ. N 914-Ա որոշման հավելվածով հաստատվել է օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերում փոփոխությունների և լրացումների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը, որով | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | նախատեսվում է մշակել և մինչև 2025 թ. ապրիլի 1-ին տասնօրյակը ՀՀ կառավարություն ներկայացնել «Պետական և հանրային ՄՈՒՀ-երի՝ պետական բյուջեից ֆինանսավորման կարգը, գործակիցները և նորմատիվները, այդ թվում՝ ըստ ՄՈՒՀ-ի ֆինանսավորման արդյունքային ցուցանիշները հաստատելու մասին» կարգը: Կարգով նախատեսվելու են խրախուսման մեխանիզմներ՝ մասնավոր ոլորտի մասնագետներին գործնական դասավանդման գործընթացում ներգրավելու համար:<br>2025 թվականի ընթացքում նախատեսվում է նաև իրականացնել աշխատանքներ ՀՀ կառավարության կողմից սահմանված գերակա ոլորտներում գործունեություն ծավալող տնտեսավարողների և գործատուների իրական կարիքներին համահունչ գործիքակազմ մշակելու նպատակով: | | |
| | | 4.4 Ֆինանսների հասանելիության ապահովում, «ՓՄՁ ներդրումային ֆոնդի և զարգացման բանկի հայեցակարգի հաստատում, հաստատման դեպքում իրագործում | | Ներկայումս իրականացվում է «Հայաստանի Հանրապետության ձեռներեցության զարգացման 2025-2030 թվականների ռազմավարական ծրագրի» մշակման աշխատանքներ: | |
| 5 | Արտահանման խթանում<br><br>Ապրանքների և ծառայությունների արտահանում/ՀՆԱ՝ 60% | 5.1 «ՀՀ արտահանման ռազմավարության և կից ճանապարհային քարտեզի մշակում և իրականացում» | Մշակվել է Հայաստանի Հանրապետության արտահանման խթանման 2025-2030թթ. ռազմավարությունը և ռազմավարության գործողությունների ծրագիրը, որը 29.01.2025թ. ներկայացվել է կարծիքի շահագրգիռ գերատեսչություններին: | ԱՄՆ ՄԶԳ «Տնտեսական հիմքեր՝ հանուն դիմակայուն Հայաստանի» ծրագրի աջակցությամբ իրականացվել են աշխատանքներ Արտահանման խթանման | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | ռազմավարության մշակման համար: Ռազմավարության աշխատանքներն ուղեկցվել են բազմաթիվ մասնագիտական քննարկումներով: Ռազմավարությունը ներկայացվել և քննարկվել է տնտեսության տարբեր ոլորտը ներկայացնող առևտրային կազմակերպություններ ի և այլ շահագրգիռ կառույցների հետ, որոնց արդյունքում ռազմավարությունն լրամշակվել է և պատրաստվել է Արտահանման խթանման ռազմավարության վերջնական տարբերակը: | |
| | | 5.2 ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերության պետական աջակցության 2021-2026թթ. միջոցառումների իրականացում | **Միջոցառումը շարունակական է**<br>1. 2024 թվականի ընթացքում կազմակերպվել է 14 միջազգային ցուցահանդեսի մասնակցություն՝<br>• «Green Week» (Բեռին, ԳԴՀ)<br>• «Gulfood-2024» (Դուբայ, ԱՄԷ)<br>• «8-րդ Չինաստան-Եվրոպա Էքսպո» (Սինցզյան, ՉԺՀ)<br>• «Riga food-2024» (Ռիգա, Լատվիայի Հանրապետություն)<br>• «Foodex Saudi» (Ռիադ, Սաուդյան Արաբիա) | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • «World food India» (Նյու-Դելի, Հնդկաստանի Հանրապետություն)<br>• «Digitec Expo» (Երևան, ՀՀ),<br>• «Sial-2024» (Փարիզ, Ֆրանսիայի Հանրապետություն)<br>• Չինաստանի 7-րդ միջազգային ներմուծման ցուցահանդես (Շանհայ, ՉԺՀ)<br>• «Bazaar Berlin» (Բեռլին, ԳԴՀ)<br>• «Bee Together» (Մոսկվա, ՌԴ)<br>• «Agro Pack Iraq» (Էրբիլ, Իրաքի Հանրապետություն)<br>• «Food Africa» (Կահիրե, Եգիպտոսի Արաբական Հանրապետություն)<br>• «CPHI Middle East» (Ռիադ, Սաուդյան Արաբիա)<br>2. Միջազգային ցուցահանդեսներին մասնակցել է 132 առևտրային կազմակերպություն<br>3. Միջազգային ցուցահանդեսներին մասնակից առևտրային կազմակերպությունները արտադրանքի արտահանման պայմանագրեր են կնքել օտարերկրյա գործընկերների հետ և արտահանում են իրականացրել Հարավային Կորեա, Արաբական Միացյալ Էմիրություններ, Հնդկաստանի Հանրապետություն և մի շարք այլ երկրներ<br>Կազմակերպվել է 6 գործարար համաժողով՝<br>• Հայաստան - Իրան<br>• Հայաստան - Ղազախստան<br>• Հայաստան - Հնդկաստան<br>• Հայաստան – Լիտվա<br>• Հայաստան – ԱՄԷ<br>• Հայաստան – Իրաք<br>4.Աջակցություն է տրամադրվել օտարերկրյա գնորդների և դիստրիբյուտորների հետ՝ 200-ից | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ավել B2B ձևաչափով հանդիպումների կազմակերպման համար: | | |
| | | 5.4 Մաքսասակագնային, ոչ սակագնային կարգավորման ոլորտի վերաբերյալ իրավասու մարմիններին առաջարկությունների ներկայացում | Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում սակագնային և ոչ սակագնային կարգավորման ոլորտում իրականացվող միջոցառումների մշակմամբ և համակարգմամբ, ԵԱՏՄ չափանիշներին համապատասխանեցմամբ: Միջոցառման իրականացման նպատակն է ՀՀ տնտեսավարող սուբյեկտների համար արտահանման և ներմուծման գործընթացների դյուրացումը, բարենպաստ պայմանների ապահովումը, ինչպես նաև արտադրական հզորությունների ավելացումը:<br>Վերոնշյալ միջոցառման շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես.<br>- 2024 թվականի ընթացքում, պարենային անվտանգության և տնտեսության կայունացման ապահովման նպատակով, ՀՀ նախաձեռնողական առաջարկությունների հիման վրա, Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել են սակագնային արտոնություններ մի շարք ապրանքատեսակների մասով՝ համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի կողմից ընդունված համապատասխան որոշումների: Մասնավորապես՝ սննդի արդյունաբերությունում օգտագործվող պահածոյացման տարաների մետաղական կափարիչների արտադրության համար նախատեսված լաքեր և ներկեր, ջութե մանրաթելեր, քիմիական, սինթետիկ թելերից կարի թելեր և կայծակ-ճարմանդներ և դրանց մասեր:<br>Նշված ապրանքատեսակների մասով սակագնային արտոնության կիրառումն | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել են հետևյալ որոշումները՝<br>- ՀՀ կառավարության 2024 թվականի փետրվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3208 90 190 9 և 3208 90 910 9 ծածկագրերին դասվող սննդի արդյունաբերությունում օգտագործվող պահածոյացման տարաների մետաղական կափարիչների արտադրության համար նախատեսված լաքերի և ներկերի նկատմամբ սակագնային արտոնություն կիրառելու և ներմուծման ընթացակարգը հաստատելու մասին» N 242 -Ն որոշում, համաձայն որի՝ նշյալ ապրանքների ՀՀ տարածք ներմուծումը թույլատրվում է 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի կիրառման պայմանով՝ 500 տոննայից ոչ ավելի ծավալով /արտոնությունը գործելու է մինչև 31.12.2024 թ./:<br>- ՀՀ կառավարության 2024 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 5307 10 000 0 և 5307 20 000 0 ծածկագրերին դասվող ջութե մանրաթելերից կամ 5303 ապրանքային դիրքում ընդգրկված այլ թելատուների մանածագործական մանրաթելերից մանվածքների նկատմամբ սակագնային արտոնություն կիրառելու և ներմուծման ընթացակարգը հաստատելու մասին» N 1119 -Ն որոշում, համաձայն որի՝ ՀՀ տարածք նշյալ ապրանքների ներմուծումը թույլատրվում է 0 տոկոս մաքսատուրքի դրույքաչափով՝ յուրաքանչյուր տարվա համար 1 տոննայից ոչ ավելի ծավալով /արտոնությունը գործելու է մինչև 28.02.2026 թ./:<br>- ՀՀ կառավարության 2024 թվականի սեպտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ԵԱՏՄ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ԱՏԳ ԱԱ 9607 19 000 0 ծածկագրին դասվող կայծակ-ճարմանդների և դրանց մասերի առանձին տեսակի նկատմամբ սակագնային արտոնություն կիրառելու և ներմուծման ընթացակարգը հաստատելու մասին» N 1544 -Ն որոշում, համաձայն որի՝ ՀՀ տարածք նշյալ ապրանքների ներմուծումը թույլատրվում է 0 տոկոս մաքսատուրքի դրույքաչափով՝ յուրաքանչուր տարվա համար 6.2 մլն մետրից ոչ ավելի ծավալով /արտոնությունը գործելու է մինչև 31.12.2025 թ./:<br>- ՀՀ կառավարության 2024 թվականի սեպտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 5401 10 140 0, 5401 10 180 0 և 5508 10 100 0 ծածկագրերին դասվող մանրածախ վաճառքի համար չբաժնեծրարված առանձին տեսակի կարի թելերի նկատմամբ սակագնային արտոնություն կիրառելու և ներմուծման ընթացակարգը հաստատելու մասին» N 1543 -Ն որոշում, համաձայն որի՝ ՀՀ տարածք նշյալ ապրանքների ներմուծումը թույլատրվում է 0 տոկոս մաքսատուրքի դրույքաչափով՝ յուրաքանչուր տարվա համապատասխանաբար՝ 38.1 տոննայից ոչ ավելի, 22.7 տոննայից ոչ ավելի և 26.0 տոննայից ոչ ավելի ծավալով /արտոնությունը գործելու է մինչև 31.12.2025 թ./:<br>Հարկ է նշել, որ թեթև արդյունաբերության տարբեր ոլորտներում սահմանվող արտոնությունների կիրառումը թույլ կտա նվազեցնել վերջնական արտադրանքի ինքնարժեքը՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ տվյալ շուկայում մրցունակության ապահովման համար:<br>✓ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 2023 թվականի նոյեմբերի 24-ի N134 որոշման դրույթներին համապատասխան՝ ՀՀ կառավարության կողմից հաստատվել են. | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | - 2024 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2307-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1589-Ն որոշումը, համաձայն որի՝ սահմանվել է 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետությանը հատկացված 8.0 հազ. հատ չափաքանակով էլեկտրաշարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցներից ռեզերվ պահված 600 հատ էլեկտրոմոբիլների բաշխման գործընթացը:<br>- ՀՀ կառավարության 2024 թվականի նոյեմբերի 28-ի «2025 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8703 80 000 2 ծածկագրին դասվող էլեկտրաշարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների նկատմամբ սակագնային արտոնություն կիրառելու և ներմուծման ընթացակարգը հաստատելու մասին» N 1876-Ն որոշումը, որով կապահովվի՝ Հայաստանի Հանրապետությանը 2025 թվականի համար հատկացված սակագնային արտոնության շրջանակներում 8000 հատ քանակով տրանսպորտային միջոցի ներմուծումը մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափի կիրառմամբ, որից 5000 հատից ոչ ավելի քանակով՝ ներմուծումը թույլատրվում է ֆիզիկական անձանց, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերին և իրավաբանական անձանց, որոնք չունեն անմիջապես ավտոարտադրողի հետ կնքված դիլերական - դիստրիբյուտորական պայմանագիր և 3000 հատից ոչ ավելի քանակով՝ անմիջապես ավտոարտադրողի հետ կնքված դիլերական - դիստրիբյուտորական պայմանագրի /համաձայնագրի/ շրջանակներում ներմուծում իրականացնող սուբյեկտներին:<br>✓ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 2024 թվականի նոյեմբերի 29-ի N 106 որոշման դրույթներին համապատասխան՝ ՀՀ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կառավարության կողմից հաստատվել է.<br>✓ 2024 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող սերուցքային կարագի նկատմամբ սակագնային արտոնություն կիրառելու, ներմուծման կարգը, մեկանգամյա և գլխավոր լիցենզիաների ձևերը հաստատելու մասին» N 2036-Ն որոշումը: Որոշմամբ Հայաստանի Հանրապետություն ներկրվող 2000.0 տոննայի չափով սերուցքային կարագի նկատմամբ սակագնային արտոնության /0 % մաքսատուրքի դրույքաչափ/ կիրառման ժամկետ է սահմանված՝ 2024 թվականի դեկտեմբերի 24 - ից մինչև 2025 թվականի հունիսի 15-ը ներառյալ:<br>✓ Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից Եվրասիական տնտեսական հանձնաժողով է ներկայացվել Հայաստանի Հանրապետության նախաձեռնողական առաջարկը՝ 2025 թվականին 3,5 հազ. տոննա ծավալով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող սերմացու կարտոֆիլի (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր 0701 10 000 0) ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատելու ձևով սակագնային արտոնություն սահմանելու վերաբերյալ: Այս միջոցառման իրականացումն ուղղված է ՀՀ գյուղատնտեսությանը կարտոֆիլի որակյալ տնկանյութով ապահովմանը: Հայկական կողմի առաջարկը քննարկվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Առևտրի հարցերով խորհրդատվական կոմիտեի մաքսասակագնային և ոչ սակագնային կարգավորման ու պաշտպանական միջոցների գծով ենթակոմիտեի ս.թ. նոյեմբերի 29-ին և դեկտեմբերի 19-ին կայացած նիստերի ընթացքում: | | |
| | | 5.5 Ներքին շուկայի պաշտպանության և հակագնագցման միջոցների | Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության շրջանակներում ԵԱՏՄ անդամ պետությունները, այդ թվում՝ Հայաստանի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կիրառման քաղաքականության մշակում | Հանրապետությունն իրականացնում են ներքին շուկայի պաշտպանության և հակագնագցման միջոցների կիրառման միասնական քաղաքականություն:<br>Միաժամանակ, ներքին շուկայի պաշտպանության և հակագնագցման միջոցների մասով հետաքննության վարումը և որոշումների ընդունումը վերապահված է Եվրասիական տնտեսական հանձնաժողովին:<br>Վերոնշյալ միջոցառման շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես.<br>✓ Արգելվել է Հայաստանի Հանրապետությունից մի շարք գյուղատնտեսական արտադրատեսակների, այդ թվում՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1001 19 000 0, 1001 99 000 0, 1003 90 000 0, 1005 90 000 0, 1008 10 000 , 1206 00 990 0, 1512 11 910, 1512 11 910, 1512 19 900 2, 1512 19 900 9 ծածկագրին դասվող ապրանքների նկատմամբ /ցորեն, մեսլին, գարի, եգիպտացորեն, հնդկացորեն, արևածաղկի սերմ, արևածաղկի ձեթ/ արտահանումը, ինչի հիման վրա սահմանվել են հետևյալ իրավական կարգավորումները՝<br>- ՀՀ կառավարության 2024 թվականի հունիսի 14-ի «Հայաստանի Հանրապետությունից Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող երկրներ մի շարք ապրանքների արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» N901 -Ն որոշումը, որով սահմանվել է արտահանման ժամանակավոր արգելք՝ /6 ամիս ժամկետով/ 2024 թվականի հուլիսի 3-ից մինչև 2025 թվականի հունվարի 3-ը ներառյալ:<br>- 2024 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետությունից Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող երկրներ մի շարք ապրանքների արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» N 1860-Ն որոշումը, որով արգելքը երկարաձգվել է ևս 6 ամսով՝ մինչև 2025 թվականի հուլիսի 4-ը: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ✓ Հիմք ընդունելով «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետը, ինչպես նաև համաձայն 2014 թվականի մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 47-րդ հոդվածի և «Երրորդ երկրների հանդեպ ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» արձանագրության՝ Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության և տնտեսության կայունացման ապահովման նպատակով՝ ՀՀ կառավարության կողմից ընդունվել են մի շարք որոշումներ, համաձայն որոնց սահմանափակվել կամ արգելվել է Հայաստանի Հանրապետության տարածքից որոշ տեսակի ապրանքների արտահանումը կամ ներմուծումը, մասնավորապես՝<br>- ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7112 99 000 0 ծածկագրին դասվող ավտոմեքենաների խլացուցիչների օգտագործված կատալիզատորների կերամիկական թափոնների արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» N801-Ն որոշմամբ ժամանակավոր /6 ամիս ժամկետով/ արգելք է սահմանվում ավտոմեքենաների խլացուցիչների օգտագործված կատալիզատորների կերամիկական թափոնների արտահանման նկատմամբ /արգելքը գործում է մինչև 2025 թվականի հունվարի 2-ը ներառյալ:/<br>- ՀՀ կառավարության 2024 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7112 99 000 0 ծածկագրին դասվող ավտոմեքենաների խլացուցիչների օգտագործված կատալիզատորների կերամիկական թափոնների արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» N1848-Ն որոշմամբ ևս 6 ամիս ժամկետով / 2025 թվականի հունվարի 3-ից մինչև 2025 թվականի հուլիսի 3-ը ներառյալ/ երկարաձգվել է | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ավտոմեքենաների խլացուցիչների օգտագործված կատալիզատորների կերամիկական թափոնների արտահանման արգելքը:<br>Վերոնշյալ երկու միջոցների կիրառման արդյունքում՝ նախատեսվում է նվազեցնել ավտոտրանսպորտային միջոցների՝ սարքին վիճակում գտնվող չեզոքացման համակարգի ապամոնտաժման, առանց չեզոքացման համակարգի և դրա անսարք վիճակում ավտոտրանսպորտային միջոցի շահագործման և ապօրինի շրջանառության դեպքերը, մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետումների ծավալները:<br>- Կենդանի խոզերի ներմուծման և շրջանառության գործընթացում վերահսկողության ուժեղացման և խոզի մսի տեղական արտադրողների տնտեսական շահերի պաշտպանության նպատակով՝ ՀՀ կառավարության 2024 թվականի նոյեմբերի 21-ի «ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0103 92 ծածկագրին դասվող՝ ընտանի տեսակների կենդանի խոզերի Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման ժամանակավոր քանակական սահմանափակում կիրառելու և ներմուծման ընթացակարգը հաստատելու մասին» N1815-Ն որոշմամբ սահմանվել է ժամանակավոր քանակական սահմանափակում ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0103 92 ծածկագրին դասվող 50 կգ կամ ավելի զանգվածով՝ ընտանի տեսակների կենդանի խոզերի՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման նկատմամբ, (բացառությամբ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0103 92 110 0 ծածկագիր), ոչ ավելի, քան 25,0 հազար հատ քանակով: Արգելքը գործելու է 2025 թվականի հունվարի 1-ից՝ 6 ամիս ժամկետով | | |
| 6 | Միջազգային առևտրատնտեսական համագործակցության ընդլայնում և խորացում | 6.1 ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացում, ՀՀ-ԵՄ | • 2024թ. հոկտեմբերի 24-25-ը Բրյուսելում տեղի է ունեցել ՀՀ-ԵՄ Առևտրի հարցերով գործընկերության կոմիտեի 6-րդ նիստը: Նիստի ընթացքում քննարկվել են առևտրի և | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | առևտրատնտեսական համագործակցության ապահովում | ներդրումների ոլորտներում վերջին զարգացումները, ԵՄ կողմից ՀՀ-ին տրամադրվող ոլորտային աջակցությունը, Համաձայնագրի 237-րդ հոդվածում ամրագրված պարտավորությունների իրականացումը, Աշխարհագրական նշումների պաշտպանության մասով իրավական կիրարկումը, ինչպես նաև ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցությանն առնչվող այլ հարցեր: Ամփոփվել են Կոմիտեի ներքո գործող Աշխարհագրական նշումների և Մաքսային հարցերով ենթակոմիտեների նիստերի արդյունքները և ձեռք բերված պայմանավորվածությունները, ՀԸԳՀ Մաս VI-ի (առևտուր և առևտրին առնչվող հարցեր) գլուխների և դրանց համապատասխան 12 ճանապարհային քարտեզների իրականացման հարցերը, ներկայացվել են ՀԸԳՀ Մաս VI-ի «Առևտուր և կայուն զարգացում» գլխի ճանապարհային քարտեզի նոր ձևաչափի բովանդակային փոփոխությունները: Ստորագրվել է Կոմիտեի որոշումը, որով ընդունվել են ՀԸԳՀ-ի Վարքագծի կանոններ (Code of conduct), Հաշտարարության մեխանիզմ (Mediation mechanism) և Ընթացակարգային կանոններ (Rules of Procedure) հավելվածները:<br>• 2024թ. սեպտեմբերի 18-ին առցանց ձևաչափով տեղի է ունեցել ՀՀ-ԵՄ Աշխարհագրական նշումների ենթակոմիտեի 5-րդ նիստը: Նիստի ընթացքում կողմերը քննարկել են ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ-ով ամրագրված «Շամպայն» և «Կոնյակ» աշխարհագրական նշումների վերաբերյալ դրույթների իրականացման մասով տարվող աշխատանքները: Ներկայացվել են նաև աշխարհագրական նշումների վերաբերյալ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | երկկողմ օրենսդրական զարգացումները, հաստատվել են ենթակոմիտեի ընթացակարգային կանոնների և ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ-ի Հավելված X-ում ներառված աշխարհագրական նշումների ցանկերի թարմացման որոշումները:<br>• 2024թ. նոյեմբերի 8-ին Բրյուսելում տեղի է ունեցել Տնտեսական համագործակցության և այլ հարակից ոլորտների հարցերով համագործակցության ենթակոմիտեի 4-րդ նիստը:<br>• 2024թ. մարտի 20-ին առցանց ձևաչափով տեղի է ունեցել Մաքսային հարցերով ենթակոմիտեի 4-րդ նիստը:<br>• Թարմացվել են ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ Մաս VI-ի ներքո 12 ճանապարհային քարտեզները, որոնցում ներառված են Համաձայնագրի համապատասխան գլուխների ներքո ամրագրված պայմանավորվածությունների իրականացման իրավիճակը, երկկողմ համագործակցությանն առնչվող զարգացումները: Դիտանցման արդյունքում լրամշակված և ամփոփված ճանապարհային քարտեզները քննարկվել են ԵՄ կողմի հետ՝ ՀՀ-ԵՄ Առևտրի հարցերով գործընկերության կոմիտեի 6-րդ նիստի ընթացքում:<br>• ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցության ապահովման շրջանակներում ՀՀ-ԵՄ Առևտրի հարցերով գործընկերության կոմիտեի 5-րդ նիստի «Գործառնական եզրակացություններ» փաստաթղթում ամրագրված ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ Մաս VI-ի գլուխների ներքո երկկողմ պայմանավորվածությունները շրջանառվել են համապատասխան պետական կառավարման մարմիններին, տեղեկատվությունը | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հավաքագրվել, ամփոփվել և տրամադրվել է ԵՄ կողմին:<br>• ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ 237-րդ հոդվածի շրջանակներում ՀՀ-ից ծագող ապրանքների համար «Կոնյակ» աշխարհագրական նշումի օգտագործման դադարեցման ուղղությամբ գործընթացներն ապահովելու նպատակով՝ «Հայկական կոնյակի» համար, որպես նախընտրելի տարբերակ առաջարկվել է «Armenian Brandy» անվանումը: Հայկական կոնյակի վերաբրենդավորման շրջանակներում մեկնարկել է «Աջակցություն ՀԸԳՀ-ի 237-րդ հոդվածի իրականացմանը – Փուլ I» ֆինանսավորման համաձայնագրի (2,9 մլն եվրո) ծրագիրը՝ 2024թ. նոյեմբերից՝ 2 տարի տևողությամբ: Ծրագիրն աջակցելու է հայկական կոնյակի նոր անվանման խթանմանը և շուկայահանմանը, նոր անվանմամբ կոնյակի արտադրության որակի հսկողության և վերահսկողության ճշգիրտ մեխանիզմներ ներդնելու գործընթացների ապահովմանը: | | |
| | | 6.2 ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակներում երկկողմ և բազմակողմ ձևաչափով համագործակցության ապահովում, ԵՄ ֆինանսավորմամբ ծրագրերի իրականացում | • ՀՀ կառավարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան պաշտոնյաները պարբերաբար մասնակցել են ՀՀ կառավարությունում կայացած ԵՄ տնտեսական և ներդրումային պլանի ուղենշային ծրագրերի քննարկումներին և ներկայացրել մշակված ծրագրային փաթեթները և ծրագրերի բովանդակային մանրամասները:<br>• Իրականացվել են հանդիպումներ, քննարկումներ միջազգային ֆինանսական կառույցների և ԵՄ համապատասխան գործընկերների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել և բանակցվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կողմից մշակված ծրագրերը և դրանց ֆինանսավորումը:<br>Մասնավորապես՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության իրավասության ներքո գտնվող ծրագրերի իրականացման վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝<br><br>**Վարկային երաշխիքի ծրագիր**<br>Ծրագիրը քննարկվել է ԵՄ և Համաշխարհային բանկի հետ, մշակվել վարկային երաշխիքի մեխանիզմի կոնցեպտ: Վերջինս ներկայացվել է նաև ՀՀ ֆինանսական կազմակերպություններին:<br>2024թ. ապրիլի 2-ին նախագիծը քննարկվել է ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստում: Լրամշակված նախագծով նախատեսվում է վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում և վարկային պորտֆելի երաշխիք՝ կողմերի եռակողմ պայմանագրով: Հաջորդ քայլերը կախված են ֆինանսական մոդելի գործարկումից:<br><br>**Արտահանման դիվերսիֆիկացիայի աջակցման ծրագիր**<br>2024թ. հունիսի 20-ին տեղի է ունեցել ծրագրի պաշտոնական մեկնարկը: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը տրամադրել է փորձագիտական աջակցություն Էկոնոմիկայի նախարարությանը՝ արտահանման ներուժը բարելավելու համար:<br>2024թ. հունիսին 12 ամիս ժամկետով ներգրավվել են թվով 2 փորձագետներ՝ արտահանման խթանմանն օժանդակելու նպատակով:<br>ՎԶԵԲ-ի և Էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչների միջև անցկացվում են ամենամսյա հանդիպումներ՝ ծրագրի ընթացքի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մասին տեղեկատվության փոխանակման նպատակով: Քննարկվում է նաև ծրագրի երկարաձգման հնարավորությունը:<br><br>**Կորպորատիվ պարտատոմսերի թողարկման ծրագիր/Կապիտալի շուկայի զարգացման աջակցության ծրագիր**<br>ՎԶԵԲ-ի հետ ձեռք բերված նախնական համաձայնությամբ՝ մշակվել է ծրագրի տեխնիկական առաջադրանքը, որը Էկոնոմիկայի նախարարությունը հաստատել է 2024թ. փետրվարի 2-ին: Ծրագիրը ֆինանսավորվելու է ԵՄ կողմից, իսկ ֆինանսավորման պայմանագիրը ստորագրվել է մայիսի 14-16-ը կայացած ՎԶԵԲ-ի տարեկան համաժողովի ընթացքում:<br>Հիմնական քայլերից է պոտենցիալ թողարկողների գնահատումը, ծրագրի մշակումն ու իրականացումը: Ծրագիրը կիրականացվի Galt & Taggart և Ameriabank ընկերությունների կողմից: Ծրագրի մեկնարկը տեղի է ունեցել 2024թ. դեկտեմբերի 11-ին, իսկ խորհրդատուները 4 ամսվա ընթացքում պետք է ներկայացնեն Ծրագրի դիզայնը՝ հիմնվելով ընկերությունների ֆինանսավորման կարիքների վրա:<br><br>**Որակի ենթակառուցվածքի համակարգի արդիականացում**<br>ԵՄ գործընկերների հետ անցկացվել են հանդիպումներ, որտեղ քննարկվել են որակի ենթակառուցվածքի կարիքներն ու ծրագրի բաղադրիչները: Մշակվել է որակի ենթակառուցվածքի պետական քաղաքականության և վերահսկողության մեխանիզմների արդիականացման ծրագիր: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 2024թ. դեկտեմբերի 5-ին ծրագիրը ներկայացվել է փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի գրասենյակ՝ դիրքորոշման նպատակով: Դրական դիրքորոշում ստանալուց հետո ծրագիրը ներկայացվել է ՀՀ-ում ԵՄ պատվիրակությանը:<br>Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ հաշվի առնելով տարածաշրջանային զարգացումները՝ ԵՄ կողմից վերջին ժամանակաշրջանում ԵՄ Արևելյան գործընկերության տնտեսական պլատֆորմի և դրա ներքո գործող պանելների նիստեր չեն կազմակերպվել: | | |
| | | 6.3 ԱՀԿ հետ համագործակցության խորացում և ընդլայնում, ԱՀԿ անդամակցության շրջանակներում ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարում | • Առևտրային քաղաքականության թափանցիկության և կանխատեսելիության ապահովման նպատակով 2024թ. ընթացքում, որպես Հայաստանի Հանրապետության ծանուցումների պատասխանատու մարմին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ԱՀԿ քարտուղարություն է ներկայացվել ՀՀ առևտրային քաղաքականությանն ու կիրառվող միջոցներին առնչվող՝ ԱՀԿ համաձայնագրերով սահմանված մոտ 40 ծանուցումներ՝ հիմնականում սանիտարա-բուսասանիտարական, սանիտարա-հիգիենիկ, տեխնիկական կանոնակարգման, շուկայի պաշտպանության, հակագնագցման և փոխհատուցումային միջոցների կիրառման, ներմուծումների վիճակագրության և այլ ոլորտներում, որոնց նախագծերը նախապատրաստվել և համաձայնեցվել են համապատասխան շահագրգիռ մարմինների հետ: Ծանուցումների մի մասը նախապատրաստվել և համաձայնեցվել է ԵՏՀ համապատասխան ստորաբաժանումների հետ:<br>• Շարունակվել է ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված ԱՀԿ-ում ՀՀ մաքսատուրքերի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | սահմանային ամրագրված դրույքաչափերի պարտավորությունների փոփոխության բանակցային գործընթացը՝ այդ նպատակով ԵԱՏՄ շրջանակներում ձևավորված բանակցային խմբի շրջանակներում: Մասնավորապես, տեսակոնֆերանսի ձևաչափով կազմակերպվել և անց է կացվել ԵԱՏՄ շրջանակներում գործող բանակցային խմբի նիստ, որտեղ քննարկվել են գյուղատնտեսական ապրանքների մասով ԵՄ կողմից ներկայացված առաջարկություններն ու դրանց հիման վրա տրամադրվելիք հնարավոր փոխհատուցումային տարբերակները: Ներկայումս փոխհատուցումային առաջարկությունների փաթեթը գտնվում է ԵԱՏՄ ներքին քննարկումների փուլում:<br>• ԱՀԿ-ում ՀՀ սահմանային մաքսատուրքերի դրույքաչափերի պարտավորությունների փոփոխման շրջանակներում ամերիկյան գործընկերների հետ իրականացվել է համապատասխան տեղեկատվության փոխանակում ինչպես բանակցային գործընթացի ներկա փուլի, այնպես էլ հետագա անելիքների առնչությամբ:<br>• ՀՀ կողմից իրականացված աշխատանքների շնորհիվ՝ ԱՀԿ քարտուղարության Ապրանքների առևտրի խորհրդի 2024թ. դեկտեմբեր 2-ի նիստի որոշմամբ վերոնշյալ բանակցությունների ավարտի վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 2026թ. հունվար:<br>• Ապահովվել է ԱՀԿ շրջանակում ընթացող՝ Ադրբեջանի անդամակցության հարցերով աշխատանքային խմբի հանդիպմանը ՀՀ էկոնոմիկայի նախարարության դիրքորոշման ներկայացումը: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • Ակտիվ մասնակցություն է ապահովվել ԱՀԿ շրջանակներում ընթացող բազմակողմ գործընթացներին, մասնավորապես՝ 2024թ. փետրվարին հայկական կողմը մասնակցել է Աբու-Դաբիում կայացած ԱՀԿ 13-րդ Նախարարական համաժողովին, որի ընթացքում քննարկվել են ԱՀԿ շրջանակում գործող որոշ համաձայնագրերում լրամշակումներ կատարելու հարցը, վեճերի կարգավորման մեխանիզմները, նոր համաձայնագրերի մշակման, էլեկտրոնային առևտրին, ինչպես նաև միջազգային ապրանքների և ծառայությունների առևտրին առնչվող հարցեր:<br>• Հայաստանի Հանրապետության անունից դիրքորոշումներ են ներկայացվել նաև ԱՀԿ տարբեր ոլորտային կոմիտեների նիստերի և այլ քննարկումների շրջանակներում:<br>• ԱՀԿ համագործակցության շրջանակում ապահովվել է ԱՀԿ Վերապատրաստման և տեխնիկական համագործակցության ինստիտուտի համար որպես նոր գործընկեր՝ Երևանի պետական համալսարանի ընտրության և թեկնածության ներկայացման աշխատանքները:<br>• Իրականացվել է ԱՀԿ անդամ երկրներից ԱՀԿ-ի Քարտուղարության միջոցով շրջանառված՝ առևտրատնտեսական ոլորտի կարգավորմանն առնչվող միջոցների վերաբերյալ ՀՀ համար հետաքրքրություն ներկայացնող՝ մոտ 300 ծանուցումների ուսումնասիրություն, դասակարգում և ներկայացում ՍԱՏՄ, ՀՀ ԱԱՊ, ՀՀ գործատուների և Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություններին: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • ԱՀԿ-ում գործող նորմերին համապատասխանեցնելու նպատակով՝ փորձաքննության են ենթարկվել և կարծիք է ներկայացվել մի շարք միջազգային և ներպետական փաստաթղթերի և օրենսդրական փաթեթների նախագծերի առնչությամբ:<br>• Մասնակցություն է ապահովվել ԵՏՀ-ի կողմից կազմակերպված և ԱՀԿ-ին առնչվող հարցերով ավելի քան 30 տեսակոնֆերանսներին (ԱՀԿ Առևտրի Տեխնիկական խոչընդոտների Կոմիտեի օրակարգում ընդգրկված հարցերին ԵԱՏՄ անդամ երկրների կողմից միասնական մոտեցում մշակման գործընթաց, ԵԱՏՄ-ի կողմից ԱՀԿ շրջանակներում միասնական քաղաքականության մշակման ուղղությամբ աշխատանքներ, տեխնիկական կանոնակարգերի կիրառում, առևտրային համաձայնագրերի դրությունների քննարկում և այլն): Մասնակցություն է ապահովվել նաև ԵԱՏՄ շրջանակներում գործող՝ ԱՀԿ հարցերով աշխատանքային խմբի երկու նիստերին: | | |
| | | 6.4 Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման խնդիրներով պայմանավորված՝ առանձին ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման արգելման կամ քանակական սահմանափակումների ուղղությամբ քաղաքականության մշակում և իրականացում, քվոտաների համակարգի ներդրում | Միջոցառման իրականացման նպատակը երրորդ երկրներից Հայաստանի Հանրապետություն ներմուծման և Հայաստանի Հանրապետությունից արտահանման ժամանակ ՀՀ տնտեսվարող սուբյեկտների համար ազատ առևտրի համաձայնագրերով ամրագրված արտոնություններից օգտվելու հնարավորության ստեղծումն է, ինչպես նաև ներքին շուկայում տնտեսվարող սուբյեկտների շահերի պաշտպանությունը:<br>Վերոնշյալ միջոցառման շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես. | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ✓ «Եվրասիական տնտեսական միության և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրի շրջանակներում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2024 թվականի օգոստոսի 20-ի N 100 որոշման դրույթներին համապատասխան հաստատվել են 2025 թվականի համար Հայաստանի Հանրապետությանը տրամադրված սակագնային քվոտաների ծավալները, որի հիման վրա մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է՝ ՀՀ կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 31-ի «2025 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածք Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության ծագում ունեցող երկարահատիկ բրնձի նկատմամբ սակագնային քվոտա սահմանելու, ներմուծման լիցենզիայի ընթացակարգը, մեկանգամյա և գլխավոր լիցենզիաների ձևերը հաստատելու մասին» N 1732-Ն որոշումը: Նշյալ որոշմամբ 2025 թվականի ընթացքում Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության ծագում ունեցող երկարահատիկ բրնձի առանձին տեսակների (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1006 30 670 1 և 1006 30 980 1) ներմուծումը Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունից թույլատրվում է՝ 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի կիրառման պայմանով 150 տոննայից ոչ ավելի ծավալով:<br>✓ «Եվրասիական տնտեսական միության և Սերբիայի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրի շրջանակներում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի 2024 թվականի սեպտեմբերի 23-ի N 108 որոշման դրույթներին համապատասխան՝ ՀՀ կառավարության հաստատվել է՝ 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «2025 թվականի ընթացքում | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Սերբիայի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող սերբական ծագում ունեցող առանձին տեսակի ապրանքների նկատմամբ սակագնային քվոտա սահմանելու, ներմուծման թույլատրելի ծավալի բաշխման ընթացակարգը, մեկանգամյա և գլխավոր լիցենզիաների ձևերը հաստատելու մասին» N 2084-Ն որոշումը, որով հաստատվել է արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների միջև 2025 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սերբական ծագման պանիր՝ 2.0 տոննա, թրմօղիներ՝ 8708 սպ. լիտր, ծխախոտ՝ 5000 հազ. հատ չափով ապրանքների՝ Սերբիայի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն ներմուծման քվոտայի ծավալների բաշխման ընթացակարգը:<br>✓ ՀՀ կառավարության կողմից հաստատվել է ՀՀ կառավարության 2024 թվականի փետրվարի 29-ի «Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգի կիրառմամբ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանվող թանկարժեք մետաղների կամ թանկարժեք մետաղներով պատված մետաղների նկատմամբ քվոտա սահմանելու մասին» N 286-Ն որոշումը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության կողմից միակողմանի կարգով սահմանվել են թանկարժեք մետաղների կամ թանկարժեք մետաղներով պատված մետաղների մաքսային տարածքից դուրս վերամշակման նպատակով արտահանման քանակական սահմանափակումներ՝ /ոչ սակագնային քվոտա/<br>1200 կգ - թանկարժեք մետաղների կամ թանկարժեք մետաղներով պատված մետաղների /ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7107 00 000 0, 7108-ից, 7109 00 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 000 0, 7110 և 7111 00 000 0 ծածկագրերին դասվող/,<br>5000 կգ – արծաթ՝ չմշակված տեսքով /ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7106-ից/:<br>Հարկ է նշել, որ 2025 թվականի համար նախատեսված համանման ՀՀ կառավարության որոշման նախագիծը գտնվում մշակման փուլում:<br>✓ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի 2024 թվականի օգոստոսի 20-ի N 99 դրույթներին համապատասխան՝ ՀՀ կառավարության կողմից հաստատվել է ՀՀ կառավարության 2024 թվականի նոյեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող առանձին տեսակի գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ սակագնային քվոտա կիրառելու, ներմուծման կարգը, մեկանգամյա և գլխավոր լիցենզիաների ձևերը հաստատելու մասին» N 1739-Ն որոշումը, որով սահմանվել են 2024 թվականի ընթացքում ՀՀ տարածք ներմուծվող առանձին տեսակի գյուղատնտեսական ապրանքների /խոշոր եղջերավոր անասունների միս – 9.5 հազ. տոննա, խոզի միս – 9.4 հազ. տոննա, ընտանի թռչունների միս – 35.1 հազ. տոննա և կաթնային շիճուկ – 0.7 հազ. տոննա/ ներմուծման սահմանված քվոտայի ծավալները և ներմուծման թույլատրելի ծավալի բաշխման կարգը:<br>✓ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 2024 թվականի նոյեմբերի 29-ի N107 որոշման դրույթներին համապատասխան՝ ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի նոյեմբերի 7-ի N1739-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագիծը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությանը հատկացված 9,5 հազ տոննա քանակությամբ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | սակագնային քվոտայից 9,0 հազ. տոննա ծավալով խոշոր եղջերավոր անասունների մսի մասով նախատեսվում է սահման ներմուծման լրացուցիչ սակագնային արտոնություն, այն է՝ 15% մաքսատուրքի փոխարեն 0% մաքսատուրքի կիրառում: Նշենք, որ որոշման նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարության հաստատմանը: | | |
| | | 6.5 Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ արտոնյալ առևտրային ռեժիմների առևտրատնտեսական համագործակցության ընդլայնում | ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ապահովվում է ԵԱՏՄ շրջանակներում Հայաստանի՝ արտոնյալ առևտրային ռեժիմների կիրառման հնարավորությունների բանակցային գործընթացը երրորդ երկրների հետ առևտրի շրջանակներում. սակագնային և ոչ սակագնային արտոնությունների բանակցումը, համաձայնագրերի տեքստերի համաձայնեցումը, հաշվի առնելով ՀՀ տնտեսական շահերը և արտաքին շուկաներում ՀՀ արտադրանքի ներկայացվածության ապահովումը:<br><br>2024թ. ընթացքում շարունակական աշխատանքներ են տարվել ԵԱՏՄ շրջանակներում երրորդ երկրների հետ նախատեսվող և կնքված ազատ առևտրի, ինչպես նաև առևտրատնտեսական համագործակցության համաձայնագրերի շրջանակներում տվյալ երկրի շուկա՝ ՀՀ արտադրատեսակների մուտքի ազատականացման ուղղությամբ, մասնավորապես՝<br><br>✓ ԵԱՏՄ - ԻԻՀ<br>«Եվրասիական տնտեսական միության ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագիրը ստորագրվել է 2023 թվականի դեկտեմբերի 25-ին Սանկտ Պետերբուրգում: Համաձայնագիրը | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | վավերացվել է Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Ղրղզստանի Հանրապետության կողմից:<br><br>Համաձայնագիրը կարգավորում է տնտեսական համագործակցության հարցերի լայն շրջանակ, մասնավորապես՝ իրավական և հորիզոնական պարտավորությունները, փոխադարձ առևտրի դյուրացումն ու խթանումը, ներքին շուկայի պաշտպանությունը, մաքսային կարգավորումը, մրցակցությունը, սանիտարական և բուսասանիտարական միջոցառումները, առևտրում տեխնիկական խոչընդոտները, ծագման կանոնների որոշումը, վեճերի լուծումը, պետական գնումները և այլ բնագավառներին առնչվող խնդիրներ: Համաձայնագիրը նախատեսում է ապրանքների արտահանման և ներմուծման գործընթացների ժամանակ կիրառվող կանոնակարգերի թափանցիկություն, ինչպես նաև առևտրում պաշտպանիչ միջոցների կիրառման ժամանակ ԱՀԿ նորմերի ապահովում:<br><br>Համաձայնագրով ամրագրված դրույթներով նախատեսվում է իրանական շուկա ապրանքների առավելագույն հնարավոր տեսականու համար առանց մաքսատուրքի մուտքի ապահովում, միաժամանակ ապահովելով Ժամանակավոր համաձայնագրում պարունակվող մուտքի պայմանների չվատթարացումը՝ ներմուծման մաքսատուրքերի վերացման վերաբերյալ պայմանավորվածությունների ձեռքբերման անհնարինության դեպքում:<br><br>Համաձայնագրի անբաժանելի մաս են հանդիսանում նաև կից ցանկերը, որոնց մեջ ներառված ապրանքատեսակների հանդեպ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Կողմերը պատրաստ են տրամադրել սակագնային արտոնություններ:<br><br>✓ ԵԱՏՄ -Մոնղոլիա<br>Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Մոնղոլիայի՝ մյուս կողմից, միջև ժամանակավոր առևտրային համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) նախագծին հավանություն է տրվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2024թ. սեպտեմբերի 24-ի թիվ 20 կարգադրությամբ:<br><br>Համաձայնագրի նպատակն է ազատականացնել և պարզեցնել Կողմերի միջև ապրանքների առևտուրը, այդ թվում՝ սակագնային և ոչ սակագնային խոչընդոտների նվազեցման միջոցով, աջակցել Կողմերի միջև տնտեսական և առևտրային փոխգործակցությանը, ինչպես նաև խրախուսել Կողմերի միջև առևտրի ընդլայնումը և բազմազանեցումը:<br><br>Համաձայնագրի կիրարկման արդյունքում նախատեսվում է ապահովել Համաձայնագրի կողմերի միջև առևտրի ընդլայնում և դիվերսիֆիկացում, ինչպես նաև բարձրացնել ԵԱՏՄ անդամ պետությունների ապրանքների մրցունակությունը մոնղոլական շուկայում՝ ավելացնելով արտահանման ծավալները:<br><br>Համաձայնագիրը կարգավորում է տնտեսական համագործակցության հարցերի լայն շրջանակ, մասնավորապես՝ իրավական և հորիզոնական պարտավորությունները, փոխադարձ առևտրի դյուրացումն ու խթանումը, մաքսային կարգավորումը, սանիտարական և բուսասանիտարական միջոցառումները, | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | էլեկտրոնային առևտուրը, վեճերի լուծումը և այլ բնագավառներին առնչվող խնդիրներ:<br><br>Համաձայնագիրը սահմանում է կողմերի սակագնային պարտավորությունների ցանկը, ապրանքների ծագումը որոշելու կանոնները, Համաձայնագրի գործողության շրջանակում տեղեկատվության փոխանակման հետ կապված առանձնահատկությունները և այլն:<br><br>Համաձայնագրով նախատեսվում է Համաձայնագրի գործողության ժամկետը սահմանել երեք տարի՝ հետագայում ևս երեք տարով երկարաձգելու հնարավորությամբ, եթե կողմերն այլ բան չպայմանավորվեն:<br><br>2024 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ ՀՀ և ԵԱՏՄ մյուս անդամ պետությունների կողմից ավարտվել են Համաձայնագարի ստորագրման համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը:<br><br>✓ Բանակցությունների հաջորդական փուլերի իրականացում ԵԱՏՄ շրջանակներում՝ երրորդ երկրների հետ ազատ առևտրի համաձայնագրերի ուղղությամբ՝<br>ԵԱՏՄ - Եգիպտոսի Արաբական Հանրապետություն ազատ առևտրի համաձայնագրով՝ բանակցությունների վեց փուլ, ԵԱՏՄ – Ինդոնեզիայի Հանրապետություն ազատ առևտրի համաձայնագրով՝ բանակցությունների հինգ փուլ, ԵԱՏՄ - Արաբական Միացյալ Էմիրություններ տնտեսական համագործակցության համաձայնագրով՝ բանակցությունների չորս փուլ:<br><br>Նշյալ համաձայնագրերի շուրջ վարվող 2024 թվականի բանակցային փուլերի ընթացքում հիմնականում քննարկվել են սակագնային | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ազատականացման հարցերը, ինչպես նաև համաձայնագրերի նախագծերի տեքստերի չհամաձայնեցված դրույթները: Քննարկվել են նաև համաձայնագրերին կից ցանկերը, որոնց մեջ ներառված ապրանքատեսակների հանդեպ Կողմերը պատրաստ են տրամադրել սակագնային արտոնություններ: Նշված ցանկերում հայկական կողմից ներկայացվել են ՀՀ համար արտահանման հետաքրքրություն ունեցող մի շարք ապրանքներ:<br><br>Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը մասնակցել է ԵԱՏՄ շրջանակներում Արաբական Միացյալ էմիրությունների, Ինդոնեզիայի, Եգիպտոսի, Մոնղոլիայի հետ իրականացվող ազատ առևտրի համաձայնագրերի կնքմանն ուղղված համատեղ աշխատանքային խմբերի հանդիպումներին, վերլուծություններին և ուսումնասիրություններին:<br><br>✓ ԵԱՏՄ – Ինդոնեզիայի Հանրապետություն<br>2024թ. մարտին և հուլիսին կայացել են Եվրասիական տնտեսական միության և իր անդամ պետությունների՝ մի կողմից, և Ինդոնեզիայի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի համաձայնագրի կնքման բանակցությունների 4-րդ և 5-րդ փուլերը, որոնց ընթացքում քննարկվել են Համաձայնագրի նախագծի տեքստերը, մասնավորապես՝ իրավական և հորիզոնական հարցեր, ապրանքների առևտուր, առևտրի պաշտպանական միջոցներ, ստանդարտներ, տեխնիկական կանոնակարգեր և համապատասխանության գնահատման ընթացակարգեր, սանիտարական և բուսասանիտարական միջոցառումներ, ծագման կանոնների որոշում, մտավոր սեփականություն, | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ճյուղային համագործակցություն, էլեկտրոնային առևտուր և մրցակցություն, վեճերի լուծում գլուխները:<br><br>✓ ԵԱՏՄ - Արաբական Միացյալ Էմիրություններ<br>2024թ. Սեպտեմբերին կայացել է Եվրասիական տնտեսական միության և իր անդամ պետությունների՝ մի կողմից, և Արաբական Միացյալ Էմիրությունների միջև տնտեսական համագործակցության համաձայնագրի կնքման բանակցությունների 4-րդ փուլը, որի ընթացքում քննարկվել են Համաձայնագրի նախագծի տեքստերը, մասնավորապես՝ իրավական և հորիզոնական հարցեր, ապրանքների առևտուր, առևտրի պաշտպանական միջոցներ, տեխնիկական խոչընդոտներ, սանիտարական և բուսասանիտարական միջոցառումներ, ծագման կանոնների որոշում, մտավոր սեփականություն և վեճերի լուծում գլուխները:<br><br>✓ ԵԱՏՄ – Վիետնամի Սոցիալիստական Հանրապետություն<br>Շարունակվում են ԵԱՏՄ – Վիետնամի Սոցիալիստական Հանրապետություն ազատ առևտրի համաձայնագրի իրականացման արդյունավետության բարձրացմանն ուղված աշխատանքները:<br><br>Համաձայնագրի արդիականացման շրջանակներում վիետնամական կողմի հետ համագործակցության հետագա զարգացման և խորացման նպատակով հայկական կողմը ևս մեկ անգամ վերահաստատել է իր հետաքրքրությունը կոնյակի արտադրանքի՝ վիետնամական շուկա մուտքի ազատականացման վերաբերյալ:<br><br>✓ ԵԱՏՄ- Չինաստանի Ժողովրդական | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Հանրապետություն<br>2024թ. ապրիլին կայացել է ԵԱՏՄ - Չինաստան առևտրատնտեսական համագործակցության համաձայնագրի իրագործման նպատակով հիմնված համատեղ կոմիտեի չորրորդ նիստը, որի ընթացքում քննարկվել են ԵԱՏՄ անդամ երկրների և Չինաստանի միջև փոխադարձ առևտրի խոչընդոտների, առևտրի պաշտպանական միջոցների, սանիտարական և բուսասանիտարական միջոցների, մաքսային համագործակցության, մտավոր սեփականության, էլեկտրոնային և թվային առևտրի, ոլորտային համագործակցության այլ հարցեր:<br><br>✓ Հայաստանի Հանրապետություն - Արաբական Միացյալ Էմիրություններ<br>Պայմանավորվածություն է ձեռք բերվել Արաբական Միացյալ Էմիրությունների հետ երկկողմ ծառայությունների և ներդրումների մասով համաձայնագրի կնքման վերաբերյալ:<br><br>2024թ. դեկտեմբերի դրությամբ ավարտվել են «Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև ծառայությունների առևտրի և ներդրումների մասին» համաձայնագրի նախագծի բանակցությունները: Ներկայումս իրականացվում են Համաձայնագրի տեքստի իրավական սրբագրման աշխատանքները: | | |
| | | 6.6 ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում, ինչպես նաև երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում խոչընդոտների և արգելքների | Վերոնշյալ միջոցառման շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվում են ինչպես ԵԱՏՄ անդամ պետությունների փոխադարձ առևտրում առկա խոչընդոտների, այնպես էլ երրորդ երկրների հետ առևտրում առկա խոչընդոտների, սահմանափակումների և արգելքների | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | բացահայտում և վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում | բացահայտմանը և վերացմանն ուղղված աշխատանքներ:<br>Որպես նշված միջոցառման կատարման ուղղությամբ նախանշվող աշխատանքներ 2024 թվականին ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվել են հետևյալ միջոցառումները.<br>✓ «Եվրասիական վերաապահովագրական ընկերության հիմնադրման մասին» համաձայնագրի շրջանակներում՝ Եվրասիական վերաապահովագրական ընկերության (ԵՎԸ) և Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն ԱՓԲԸ–ի (ՀԱԱԳ ԱՓԲԸ) միջև 2024 թվականի հուլիսի 24–ին կնքվել է Վերաապահովագրության հիմնական պայմանների մասին պայմանագիրը: Ընկերության գործունեության արդյունքում ԵԱՏՄ անդամ պետությունների շուկայում ձևավորվել է լրացուցիչ ապահովագրական ծածկույթ՝ 120.4 մլրդ ՌԴ ռուբլու չափով, ինչը թույլ կտա աջակցել ներքին և արտաքին առևտրի ծավալներին ավելի քան 361.3 մլրդ ՌԴ ռուբլու չափով և ապահովել ապահովագրման միասնական պայմաններ ԵԱՏՄ անդամ պետությունների համատեղ արտադրված ապրանքների համար: Հանրապետության մասնակցության մասնաբաժնի ծավալը սահմանվել է Ընկերության կանոնադրական կապիտալի 3%-ի չափով՝ 450 մլն ՌԴ ռուբլի:<br>Բարեփոխման իրականացման համար Հայաստանի Հանրապետությունը վճարել է ընկերության կանոնադրությամբ սահմանված իր երկրորդ մասնաբաժինը՝ 710 437.50 ՀՀ դրամի չափով /2023թ.՝ 509 625.00 ՀՀ դրամ/: Երրորդ՝ վերջին մասնաբաժնի վճարումը նախատեսվում է 2025 թվականի երրորդ եռամսյակում:<br>Վերաապահովագրության նպատակով ՀԱԱԳ ԱՓԲԸ–ի կողմից ԵՎԸ–ին ներկայացվել են թվով 31 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հատ հարցում, որից՝ 26–ը հաստատվել են՝ մոտ 13,2 մլն ԱՄՆ դոլարի չափով, 3–ը մերժվել են՝ մոտ 2,3 մլն ԱՄՆ դոլարի չափով, 2–ը քննարկման փուլում է՝ մոտ 1,1 մլն ԱՄՆ դոլարի չափով: Տեղեկատվությունը ներկայացված է 18.12.2024թ.–ի դրությամբ:<br>✓ 2024 թվականին շարունակվել են իրականացվել աշխատանքներ արդյունաբերական ապրանքների Եվրասիական ռեեստրում ընդգրկված ապրանքների ցանկի ընդլայնման ուղղությամբ, հաշվի առնելով նաև այն ապրանքները, որոնք արտադրվում են կամ կարող են արտադրվել հայկական ապրանքարտադրողների կողմից: Մասնավորապես՝ Եվրասիական ռեեստրում գրանցվել են՝ լվացող միջոցեր, կոշիկ, կահույք, սարքեր և սարքավորումներ՝ ֆիզիկական կամ քիմիական անալիզի համար ապրանքատեսակները:<br>Նշված ապրանքներն արտադրող ընկերությունների գրանցումը Եվրասիական ռեեստրում թույլ կտա հայկական ապրանքարտադրողներին մասնակցելու Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պետական (մունիցիպալ) գնումներին, ինչն իր հերթին հնարավորություն է վերջիններիս համար՝ ներկայացնելու իրենց արտադրանքը Եվրասիական տնտեսական միության շուկայում: Հաշվետու ժամանակահատվածում էկոնոմիկայի նախարարության կողմից աշխատանքներ են իրականացվել նաև նշյալ ռեեստրում արդեն իսկ ընդգրկված ապրանքներ արտադրող հայկական ընկերություններին այդ ռեեստրում գրանցելու ուղղությամբ:<br>✓ 2024 թվականի ընթացքում շարունակվել են Եվրասիական տնտեսական միջկառավարական | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 19-ի N10 որոշմամբ հաստատված՝ էլեկտրոնային առևտրի զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելուն ուղղված աշխատանքները:<br>Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հարթակում իրականացվել են քննարկումներ «ԵԱՏՄ-ում ապրանքների էլեկտրոնային առևտրի մասին» Համաձայնագրի ձևավորման վերաբերյալ: Ընթացած քննարկումների արդյունքներով՝ համաձայնագրի բովանդակության և շրջանակների մասին համաձայնություն ձեռք չի բերվել: Մասնավորապես՝ դա վերաբերում է համաձայնագրի կիրառման շրջանակներին, որոշ հասկացություններին, վեճերի ոչ դատական կարգով լուծման համակարգին, էլեկտրոնային առևտրի մասնակիցների միություններին, ԵՏՀ իրավասությունների շրջանակներին և այլն: Առկա տարաձայնությունների վերացման նպատակով մշակվել է Եվրասիական միջկառավարական խորհրդի կարգադրության նախագիծ, որը կսահմանի հստակ մոտեցումներ համաձայնագրի դրույթների վերաբերալ, միաժամանակ սահմանելով 2022-2023 թվականների կատարման ժամկետ ունեցող Ճանապարհային քարտեզի կետերի համար կատարման նոր ժամկետ՝ 2025 թվական:<br>2024 թվականի ընթացքում մշակվել և ներկայումս գտնվում են համաձայնության բարձր աստիճանում մի շարք ԵՏՀ խորհրդի որոշումների նախագծեր, որոնք ուղղված են էլեկտրոնային առևտրի մասով ապահովելու ԵԱՏՄ Մաքսային օրենսգրքի կիրարկումը: Մասնավորապես՝ հետևյալ ԵՏՀ խորհրդի որոշումները.<br>«Ֆիզիկական անձանց կողմից գնված էլեկտրոնային առևտրի ապրանքների համար մաքսատուրքի միասնական դրույքաչափ սահմանելու մասին», | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | «Գնային չափաքանակների սահմանման մասին, որոնց շրջանակներում ֆիզիկական անձանց կողմից գնված էլեկտրոնային առևտրի ապրանքները ներմուծվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք՝ առանց մաքսատուրք վճարելու»,<br>«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 21-ի «Ոչ սակագնային կարգավորման միջոցառումների մասին» N30 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին՝ կապված միասնական ցանկում ընդգրկված այն ապրանքների ներմուծման առանձնահատկությունների հետ, որոնք գնված են ֆիզիկական անձանց կողմից էլեկտրոնային առևտրի միջոցով և որոնց հանդեպ կիրառվում են ոչ սակագնային կարգավորման միջոցներ»:<br><br>***6.6 կետի մասով որպես համակատարող՝*** *ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան աշխատակիցները մասնակցել են առևտրում խոչընդոտների և արգելքների բացահայտման և վերացման ուղղությամբ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված աշխատանքներին և քննարկումներին:* | | |
| | | 6.7 ՀՀ և այլ երկրների առևտրային հարաբերությունների զարգացման ճանապարհային քարտեզի մշակում և իրագործում | **Միջոցառումը շարունակական է**<br><br>Հայկական արտադրանքի ճանաչելիության բարձրացման և արտերկրյա շուկաներում ապրանքների վաճառքի ծավալներն մեծացնելու աշխատանքների շրջանակներում Իրանի Իսլամական Հանրապետությունում, Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում և Իրաքի Հանրապետությունում կազմակերպվել են. | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • 2024 թվականի ապրիլի 27-ից մայիսի 1-ը հայկական 57-րդ առևտրային կազմակերպությունների մասնակցությունը «Իրան Էքսպո 2024» 6-րդ միջազգային ցուցահանդեսին, որի շրջանակներում հայ գործարարներն ունեցել են նաև երկկողմանի ձևաչափով հանդիպումներ, պայմանավորվածություններ են ձեռք բերվել հետագա համագործակցության վերաբերյալ:<br>• 2024 թվականի նոյեմբերի 4-ին՝ Շանհայ քաղաքում «Armenia Promotion Week»՝ հայկական արտադրանքի մասին իրազեկվածության և ճանաչելիության բարձրացմանը միտված միջոցառման շրջանակներում 16 հայկական ընկերություններ Շանհայի Ազատ Առևտրի Գոտու «Հայաստան կենտրոն»-ի տաղավարում ներկայացրել են իրենց արտադրանքն ու ծառայություններ: Միջոցառման շրջանակներում է անցկացվել են՝ հայկական ապրանքների համտես և B2B հանդիպումներ չինական ընկերությունների ներկայացուցիչների հետ:<br>• 2024 թվականի նոյեմբերի 25-ից 28-ը Իրաքյան Քուրդիստանի Էրբիլ քաղաքում 8 առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչներ հանդիպումներ են ունեցել Իրաքյան Քուրդիստանի պատկան մարմինների և գործարար շրջանակների հետ, ծանոթացել են Իրաքյան Քուրդիստանի բիզնես միջավայրին և օրենսդրական կարգավորումներին, արտադրանքի արտահանման նպատակով բանակցություններ են վարել տեղական ընկերությունների հետ: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7 | Արդյունաբերության զարգացում՝ ոլորտին ուղղելով 80 մլրդ ֆինանսական միջոցներ Մշակող արդյունաբերություն/ՀՆԱ՝ 15%, Տնտեսական բարդության ցուցանիշը՝ -0.3-ից հասցնել 0.1-ի | 7.2 Մշակող արդյունաբերության ոլորտի ձեռնարկությունների տեխնիկական հագեցվածությունը բարձրացնելու և ժամանակակից սարքավորումների ձեռքբերմանը նպաստելու նպատակով ֆինանսական, տեղեկատվական և մի շարք այլ աջակցության գործիքակազմի ծրագրի ընդունում | ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից արդյունաբերական ոլորտի կազմակերպություններին պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվում միջազգային տեխնոլոգիական ցուցահանդեսների անցկացման վայրի, ժամկետների վերաբերյալ, ինչպես նաև նախորդ տարիների ցուցահանդեսների արդյունքների և հնարավորությունների վերաբերյալ: Միաժամանակ, Նախարարության կողմից կազմակերպություններին մշտապես տեղեկատվություն է տրամադրվում գործող աջակցության ծրագրերի վերաբերյալ: | | |
| | | 7.5. Թեթև արդյունաբերության և ստեղծագործ ոլորտների զարգացում,<br><br>«Թեթև արդյունաբերության և ստեղծագործ ոլորտների զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում՝<br><br>1. Հայաստանի թեթև արդյունաբերության զարգացման ռազմավարությանը և դրանից բխող միջոցառումների ծրագրի մշակում և իրագործում | 1. ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 2-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատվել է Տեքստիլ ոլորտի զարգացման 2021-2026թթ. ռազմավարությունը: | 1. Ներկայումս իրականացվում են ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրերի մշակում և իրականացում | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 2. Թեթև արդյունաբերության և ստեղծագործ ոլորտի համար մեկական կլաստերի ստեղծում, որը ոլորտի տնտեսավարողների համար կստեղծի տնտեսական գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների հասանելիություն | 2. Ռազմավարությամբ սահմանված որոշ միջոցառումներ պատվիրակվելու են տեքստիլ ոլորտի Օպերատորին: | 2.Ներկայումս ընթանում են տեքստիլ ոլորտի Օպերատորի հիմնման աշխատանքները: | |
| 8 | Կանաչ և կայուն տնտեսական զարգացում Վերականգնվող էներգիայի մասնաբաժինը էլեկտրաէներգիայի արտադրությունում հասցնել 50%, էլեկտրական շարժիչով մեքենաների մասնաբաժինը հասցնել 10% | 8.1 Կանաչ և կայուն տնտեսական զարգացման ռազմավարության մշակում և հաստատման դեպքում՝ դրա իրագործում | | 2024 թվականի դեկտեմբերի 6-ին «Կանաչ, կայուն և շրջանաձև տնտեսության զարգացման շրջանակային ռազմավարությունը (մինչև 2030 թվականը) և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի լրամշակված և վերջնականացված տարբերակի փաթեթը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 8.2 Արևային էներգետիկայի համար տեխնոլոգիաների զարգացում, արտադրության խթանում: Ըստ անհրաժեշտության համապատասխան իրավական ակտերի ընդունում | 8.2 կետի մասով Շրջակա միջավայրի նախարարության կողմից տեղայնացվել են «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ծրագրի շրջանակներում հետևյալ ստանդարտները՝<br><br>• ՀՍՏ ԻՍՕ 52000-1-2021<br>• ՀՍՏ ԻՍՕ 52000-2-2021<br>• ՀՍՏ ԻՍՕ 17772-1-2022<br>• ՀՍՏ ԵՆ 16798-1-2022<br>• ՀՍՏ ԵՆ 12831-3-2022<br>Աշխատանքներ են տարվում ևս 2՝ ՀՍՏ ԻՍՕ 52016-1 և ՀՍՏ ԻՍՕ 52016-2 ստանդարտի տեղայնացման ուղղությամբ: | Սույն միջոցառումն ընդգրկված է Սարքաշինության զարգացման ծրագրում: Հարկ է նշել, որ Նախարարության կողմից մշակվել է Սարքաշինության զարգացման ռազմավարական ծրագրերի նախագիծ, որը քննարկվել է Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստում: Այնուհետև, փոխվարչապետի գրասենյակում քննարկման արդյունքում որոշվել է այս փուլում ձեռնպահ մնալ ճյուղային ռազմավարություններ մշակելու մոտեցումից և տնտեսության զարգացման տեսլականը տանել առանձին ֆունկցիոնալ ռազմավարություններ մշակելու ճանապարհով: Վերոնշյալը զեկուցվել է ՀՀ վարչապետին, խնդրելով ծրագրի իրականացումը հանել հսկողությունից, և | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | հավանության է արժանացել: | |
| | | 8.3 Էլեկտրամոբիլների և էլեկտրական շարժիչներով աշխատող տրանսպորտային միջոցների և հարակից ենթակառուցվածքների ներդրման ծրագրի իրականացում | ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված ՀՀ-ում էլեկտրատրանսպորտի զարգացման ճանապարհային քարտեզը տրամադրվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն և վերջինիս կողմից ներառվել է «Հայաստանի Հանրապետության էլեկտրական շարժունակության ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծում: | | |
| | | 8.4 Բնական ռեսուրսների տնտեսական ցիկլում առավել երկար պահպանման նախադրյալների ստեղծում, «Բնական ռեսուրսների տնտեսական ցիկլում առավել երկար պահպանման նախադրյալների ստեղծման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և հաստատում | 2024 թվականի դեկտեմբերի 6-ին ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացված «Կանաչ, կայուն և շրջանաձև տնտեսության զարգացման շրջանակային ռազմավարությունը (մինչև 2030 թվականը) և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծում ներառվել են շրջանաձև տնտեսությանն առնչվող գործողություններ: | | |
| | | 8.5 Կանաչ ջրածնի արտադրության զարգացում | «Բի-Դի-Օ Ըդվայզորի» ՓԲԸ-ի կողմից իրականացված ՀՀ-ում կանաչ ջրածնի արտադրության զարգացմանը միտված նախնական տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը քննարկվել է 2023 թվականի դեկտեմբերի 28-ին և 2024 թվականի հունվարի 16-ին կայացած Հանրային ներդրումային կոմիտեի 5-րդ նիստի ընթացքում: Քննարկման արդյունքում կայացվել է որոշում ձևավորել «Կանաչ ջրածնի» հիմնահարցերով աշխատանքային խումբ: ՀՀ վարչապետի 2024թ. հունիսի 4-ի N 531-Ա որոշմամբ ձևավորվել է կանաչ ջրածնի ոլորտի զարգացմանը, դրա առավելությունների, արտադրության մեթոդների և տեխնոլոգիաների բացահայտմանը միտված աշխատանքային խումբը: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Աշխատանքային խմբի 1-ին հանդիպումը տեղի է ունեցել 2024թ. օգոստոսի 16-ին:<br>2024 թվականի դեկտեմբերի 18-ին կայացել է կանաչ ջրածնի ոլորտի զարգացման, դրա առավելությունների, արտադրության մեթոդների և տեխնոլոգիաների բացահայտման նպատակով ՀՀ վարչապետի 2024 թվականի հունիսի 4-ի N 531-Ա որոշմամբ ձևավորված աշխատանքային խմբի 2-րդ հանդիպումը: | | |
| | | 8.6 Կանաչ տաքսոնոմիայի մշակում և հաստատում | Համաշխարհային բանկի կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում կայուն և կանաչ տաքսոնոմիայի ծրագրերի և գործողությունների դասակարգման համակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կանաչ տաքսոնոմիայի ներդրմանն ուղղված ռազմավարական միջոցները որոշակիացնելու և զարգացնելու նպատակով միջազգային ու տեղական փորձագետների կողմից մշակված Հայաստանի Հանրապետությունում կանաչ տաքսոնոմիայի վերաբերյալ աշխատանքային փաստաթուղթը (այսուհետ՝ Նախագիծ): Նախագիծը ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից շրջանառվել է համապատասխան շահագրգիռ գերատեսչությունների միջև: Վերջիններիս կողմից տրամադրված նկատառումների հիման վրա Նախագիծը գտնվում է լրամշակման փուլում և վերջնականացնելուց հետո նախատեսվում է ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն և հրապարակել «e-draft» իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում:<br>Վերոգրյալի համատեքստում կազմակերպվել են նաև առանձին աշխատանքային քննարկումներ ՀՀ-ում կանաչ տաքսոնոմիայի շրջանակը | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | լրացուցիչ դիտանցելու և վերջինս առավել արդյունավետ ներդնելու նպատակով: | | |
| 9 | Գյուղատնտեսության զարգացում և արտադրողականության բարձրացում<br><br>ԳՀԱ՝ 1.4 տրլն դրամ<br><br>Անմշակ վարելահողերը<br><br>< 120 հազար հա | 9.1 ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության իրականացում | 2024թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է շուրջ 628,6 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 1.8%-ով, այդ թվում՝ բուսաբուծությունը կազմել է 354,1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճել է 2%-ով, և անասնաբուծությունը՝ 274,6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճել է 1.5%-ով:<br>ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030թթ. ռազմավարության կատարումն ապահովող 2024թ. միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ՝ 2024թ. դեկտեմբերի 25-ի 01/26311-2024 գրությամբ:<br>Միաժամանակ տեղեկացվում է, որ 9.1 միջոցառման կատարման ընթացքը ներառված է նաև ստորև ներկայացված 9.2-9.12 կետերում: | | |
| | | 9.2 Բուսաբուծության ճյուղի զարգացման խթանում | **Յուրաքանչյուր տարի առնվազն 1000 հա ինտենսիվ այգիների հիմնում**<br>Ինտենսիվ այգեգործության զարգացման ծրագրի շրջանակում վարկային և փոխհատուցման բաղադրիչներով 2024թ.-ին հաստատվել է 1353.7 հա այգեհիմնման հայտ:<br>Ծրագրի մեկնարկից մինչև 2024թ. ավարտը փաստացի հիմնվել է շուրջ 3270 հա այգի:<br><br>**տեղական սերմնաբուծության և սերմարտադրության իրականացման միջոցով գյուղատնտեսական մշակաբույսերի սերմերի առկայության ապահովում** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ՀՀ ԷՆ ‹‹Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն›› ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է 15 099 տոննա սերմերի լաբորատոր փորձարկումներ, որից՝<br>• 59,6 տոկոսը կազմել է տեղական արտադրության սերմերը,<br>• 40,4 տոկոսը՝ ներկրված:<br>Լաբորատոր փորձաքննության է ենթարկվել 575 նմուշ:<br>2024թ.-ին տրամադրվել է թվով 73 հավաստագիր՝ տեղական արտադրության 2461,3 տոննա սերմերի համար, որից՝<br>• 1164 տոննա աշնանացան և գարնանացան ցորեն, գարի<br>• 16,03 տոննա բանջարաբոստանային, ընդեղեն և յուղատու մշակաբույսեր,<br>• 1173,7 տոննա կարտոֆիլ:<br>Տրամադրվել են 47409 զույգ պիտակներ, որից նախահիմնային՝ 204 զույգ, հիմնային՝ 25 536 զույգ և 21 669 զույգ առաջին վերարտադրության սերմերի համար:<br>• Շրջանացման համար ներկայացված բանջարաբոստանային մշակաբույսերի նոր սորտերի քանակը՝ 16:<br>ՀՀ ԷՆ «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իրականացվել է.<br>• բանջարաբոստանային սերմերի արտադրություն՝ 139 կգ,<br>• բանջարաբոստանային սածիլների արտադրություն՝ 420 000 հատ:<br>Արմավիրի մարզում ՀԱԱՀ-ի «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն» | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մասնաճյուղի կողմից բուսակներից կարտոֆիլի վիրուսազերծ և առողջ mini պլարների ստացման նպատակով նախատեսված 2000մ2 ջերմատան կառուցման աշխատանքներն ավարտվել են, որտեղ իրականացվել են 2000 հատ in vitro բուսակների տնկում: 3 ամսից սպասվում է մինի պալարների առաջին խմբաքանակի ստացումը: Աշխատանքները շարունակվել են ամբողջ տարվա ընթացքում, որպեսզի 2025թ. գարնանն առնվազն 20000 հատ մինի պալարներ տնկվեն բաց դաշտում՝ սուպեր-սուպեր էլիտա ստանալու նպատակով:<br>Հյուսվածքային բազմացման (in vitro) մեթոդներով կարտոֆիլի 9 շրջանացված սորտերի բուսակներից ստացված մինի պալարները գտնվում են սուպեր էլիտայի ստացման փուլում (2-րդ փուլ):<br>Կարտոֆիլի ևս 4 (մեծ պահանջարկ ունեցող) սորտերի (in vitro) բուսակները գտնվում են կտրոնավորման և բազմացման լաբորատոր փուլում:<br>Իրականացվել է սուպեր-էլիտայի ստացման ցանքը՝ նախորդ տարվանից պահեստավորված կարտոֆիլի 9 սորտերի սուպեր-սուպեր էլիտայի տնկանյութով:<br>2024թ. իրականացվել է «Բուսաբուծության աջակցության» ծրագիրը (ծրագրի շրջանակներում իրականացվել է շուրջ 19 197 հա ցանք), որը ևս հանդիսացել է սերմարտադրության զարգացման խթան:<br>ՀՀ տարբեր բնակլիմայական գոտիներում շրջանացման համար ներկայացվել են ՀՀ տեղական արտադրության, փոփոխվող կլիմայական պայմաններին հարմարված (չորադիմացկուն, տոթադիմացկուն) բանջարաբոստանային մշակաբույսերի թվով 16 սորտեր, ներմուծված 20 և | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ավել սորտերի փորձարկման աշխատանքները շարունակվում են:<br><br>**տնկանյութի հավաստագրման համակարգի ներդրում**<br>Տնկանյութի հավաստագրման համակարգի ներդրման իրականացման նպատակով 2022թ. սեպտեմբերի 14-ին ընդունվել և 2023թ. հոկտեմբերի 5-ին ուժի մեջ է մտել «Սերմերի և տնկանյութի մասին» ՀՀ օրենքը, ընդունվել են թվով 13 ենթաօրենսդրական իրավական ակտեր, հիմնվել է կենսաքիմիական լաբորատորիայի բաղադրիչներից մեկը, մշակվել են հրահանգ-ուղեցույցներ, 2024թ. հունվարի 1-ից գործարկվել է «Խաղողի տնկանյութ» ազգային ստանդարտը, իսկ «Ծիրանենու տնկանյութ» և «Մորենու (ազնվամորենի) և մոշենու (անփուշ մոշենի) տնկանյութ» ազգային ստանդարտները գործարկվել են 2025թ. հունվարի 1-ից: 2025թ. նախատեսվում է ևս 2 ազգային ստանդարտների մշակում:<br>Հավաստագրման գործընթացների թվայնացման անհրաժշտության վերաբերյալ հիմնավորումները ներկայացվել է Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն և ընդհանուր առմամբ դրանց իրագործման վերաբերյալ առկա է դրական դիրքորոշում:<br>«Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ-ին տնկանյութի հավաստագրման գործառույթի վերապահման նպատակով ընդունվել է ՀՀ կառավարության 2024թ. հուլիսի 18-ի N 1124-Ն որոշումը, մինչդեռ տնկանյութի հավաստագրման համակարգի գործարկումը դեռևս | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | չի մեկնարկել՝ ֆինանսական միջոցների չհատկացմամբ պայմանավորված:<br><br>**ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի տարածքների ավելացում**<br>ՀՀ կառավարության 2021թ. հունիսի 3-ի N 927-Լ որոշմամբ հաստատված ՀՀ ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2025թթ. ծրագրի վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման բաղադրիչի շրջանակներում թվով 9 շահառուների կողմից ներկայացվել է շուրջ 19.2 հա ցանքատարածքների ներդրման հայտ, արդյունքում փաստացի հիմնվել է 3.2 հա ծնեբեկի ցանքատարածք:<br><br>**արդիական տեխնոլոգիաներով ջերմատնային տնտեսությունների տարածքների ընդլայնում՝ վարկային լիզինգային և փոխհատուցման գործիքներով տարեկան մինչև 10 հա**<br>Ջերմատնային տնտեսությունների հիմնման նպատակով պետական աջակցության ծրագրերի շրջանակում կնքվել է շուրջ 20 հա ջերմատնային տնտեսության հիմնման պայմանագիր:<br><br>**տարեկան շուրջ 500 միավորով գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի նորացում**<br>ՀՀ կառավարության 2022թ. հունվարի 27-ի N 105-Լ որոշմամբ հաստատված ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի շրջանակում շարունակվում է մատչելի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրումը գյուղատնտեսութամբ զբաղվող տնտեսավարողներին: Ծրագրի շրջանակում 2024թ. ձեռք է բերվել 920 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում 242 միավոր տրակտոր: Լիզինգի գումարը կազմել է շուրջ 3.1 մլրդ դրամ:<br><br>**գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրության համակարգի ամբողջական ներդրում**<br>Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ծրագրի շրջանակներում 2024թ. գյուղատնտեսական տարվա համար շուրջ 247 հա հողատարածք ապահովագրելու համար կնքվել է 27 ապահովագրական պայմանագիր:<br>Էկոնոմիկայի նախարարությունը համակարգին տեխնիկական աջակցություն տրամադրելու համար դիմել էր KfW-ին և Ֆինանսների նախարարությանը, ըստ որի Ֆինանսների նախարարության կողմից կազմվել է համաձայնագրի փոփոխության նախագիծ, շրջանառվել և ուղարկվել է Վարչապետի աշխատակազմ, սակայն ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեում քննարկման արդյունքում հանվել է օրակարգից՝ պայմանով, որ Կենտրոնական բանկը ներկայացնի ճանապարհային քարտեզ, որի հիման վրա կկայացվի որոշում:<br>Կենտրոնական բանկի առաջարկով Էկոնոմիկայի նախարարությունը դիմել է Վարչապետի աշխատակազմ՝ Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստում համաձայնագրի ստորագրման առաջարկությունը ևս մեկ անգամ քննարկման ներկայացնելու համար: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Քննարկվում են 2025 թվականի գյուղատնտեսական տարվա համար ապահովագրական համակարգի ներդրման պայմանները: | | |
| | | 9.3 Անասնաբուծության ճյուղի զարգացման խթանում | **Տոհմային գործի բարելավում՝ տարեկան 10-15 %-ով տոհմային կենդանիների տեսակարար կշռի ավելացում**<br>Տոհմային գործի բարելավման, տավարի նախիրներում և ոչխարի հոտերում բարձր մթերատու կենդանիների տեսակարար կշիռն ավելացնելու նպատակով նախարարության կողմից իրականացվել է պետական աջակցության 2 ծրագիր, որոնք միտված են եղել արտերկրից համաշխարհային ճանաչում ունեցող դասական ցեղերի տոհմային կենդանիների ներկրման խթանմանը:<br>Տոհմային տավարաբուծության ծրագրի շրջանակներում 2019-2024թթ. հանրապետություն է ներկրվել 2363 գլուխ հոլշտին, սիմենթալ, շվից, ջերսեյ, մոնբելյարդ և անգուս ցեղերի տոհմային երինջներ, որոնցից ստացվել է ավելի քան 9700 գլուխ բարձրարժեք սերունդ: 2024 թվականի դեկտեմբերին ևս 32 գլուխ կենդանի ձեռք բերելու հայտ է ներկայացվել (տրամադրվել է վարկ) և կենդանիների ներմուծումը ընթացքի մեջ է: Դրան զուգահեռ, հանրապետությունում արդեն իսկ առկա շուրջ 10000 գլուխ տոհմային կենդանիներից ստացվել է ևս ավելի քան 45500 սերունդ և 2024թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետության տավարի ընդհանուր գլխաքանակից (492 հազար) շուրջ 56,0 հազարը կամ ավելի քան 11,3 %-ը կազմում են տոհմային կենդանիներից ստացված սերունդը:<br>Տոհմային ոչխարաբուծության և այծաբուծության ծրագրի շրջանակում 2019-2023թթ. ներկրվել է 1695 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | գլուխ բարձր պտղատվությամբ և մսային հատկանիշներով օժտված՝ դորփեր, բլանշ, ռոմանովյան, էդիլբայան և այլ ցեղերի տոհմային ոչխարներ: Միջազգային կազմակերպությունների աջակցությամբ ներկրվել է ևս 1000 գլուխ բլանշ ցեղի տոհմային ոչխարներ: Ներկրված կենդանիներից և հանրապետությունում մինչ այդ առկա տոհմային կենդանիներից արդեն իսկ ստացվել է բարձր մթերատվությամբ աչքի ընկնող շուրջ 80500 կենդանիներ, ինչը կազմում է հանրապետությունում 2024թ. առկա մանր եղջերավոր կենդանիների ընդհանուր գլխաքանակի (շուրջ 710 հազար գլուխ) ավելի քան 11.3%-ը:<br>Միաժամանակ, ՀՀ-ում անասնաբուծության ոլորտի խթանման նպատակով ՀՀ կառավարության 2024թ. օգոստոսի 22-ի N 1392-Լ որոշմամբ հաստատվել են Մթերատվության բարձրացման փորձնական և Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման 2024-2028թթ. ծրագրերը, որոնք միտված են հանրապետությունում տոհմային գործի բարելավմանը:<br>Հանրապետությունում անասնաբուծության խթանման նպատակով մշակվել և հաստատման է ներկայացվել ՀՀ-ում 2025-2029թթ. տավարաբուծության զարգացման ծրագիրը:<br>ՀՀ-ում անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական ծրագրի շրջանակում տրամադրվել է կապիտալ ծախսերի 1 փոխհատուցում՝ 2.3 մլրդ դրամ ծավալով՝ շուրջ 12.4 մլրդ դրամ ծավալով փաստացի ներդրում կատարելու դիմաց: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման համակարգի ներդրում**<br>**Երեք տարիների ընթացքում (2023-2025թթ,) նախատեսվում է 739500 համարակալման միջոցառման իրականացում, այդ թվում 2023թ,՝ 686500 միջոցառում, 2024թ.՝ 195400 միջոցառում**<br>2024թ. մայիսի 30-ին հաստատվել է «ՀՀ-ում գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման ծրագիրը և միջոցառումների կատարման ժամանակացույցը հաստատելու մասին» N 818-Լ որոշումը: 2024թ. համարակալվել է 195400 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի:<br><br>**տարեկան շուրջ 25 միավոր խելացի անասնաշենքերի կառուցման խթանում**<br><br>2024 թվականին կառուցվել և տեխնոլոգիապես ապահովվել է 7 անասնաշենք: ԷՆ կողմից մշակվել և շրջանառության փուլում է գտնվում «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության 2025-2028թթ. ծրագիրը: | Միջոցառման մասնակի կատարումը պայմանավորված է այն հանգամանքով, որ շահառուների կողմից անասնաշենքերի կառուցապատման համար ներդրվող ֆինանսական միջոցների և փոխհատուցման ենթակա գումարի չափը, որը հաշվարկվել է 2019թ. և մինչ օրս փոփոխությունների չի ենթարկվել, ներկա շուկայական արժեքների փոփոխությունների արդյունքում համարժեք չեն, և շահառուները դժվարանում են ավարտին հասցնել կառուցա-պատման աշխատանքները: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Ծրագիրը 2023 թվականին ավարտվել է և 2024 թվականին մասնակցության հայտեր չեն ներկայացվել: | |
| | | 9.4 Ագրոպարենային արտադրանքի իրացման և արտահանման խթանում | **Մեծածախ շուկաների, լոգիստիկ կենտրոնների, արտահանման հիմնական շուկաներում հավաքական պահեստների ստեղծմանն աջակցության միջոցով առնվազն 1 մեծածախ շուկայի կամ լոգիստիկ կենտրոնի և առնվազն 2 հավաքական պահեստի ստեղծում**<br>ՀՀ ԷՆ և Հայաստանի Ներդրումային խորհրդի կողմից, ՎԶԵԲ-ի և Միացյալ Թագավորության կառավարության աջակցությամբ մշակվել և ԷՆ է ներկայացվել ՀՀ-ում թարմ գյուղատնտեսական արտադրանքի մթերման և իրացման կենտրոնների (լոգիստիկ կենտրոնների) ստեղծման ռազմավարական քայլերը: Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել և ներկայացվել են լոգիստիկ կենտրոնների տարբեր մոդելները, կառավարման մոտեցումները, լոգիստիկ կենտրոնների ձևավորմանն ուղղված տարբեր երկրների պետական քաղաքականությունը և իրականացրած քայլերը: Միաժամանակ ուսումնասիրվել է նաև միջազգային փորձը՝ օգտագործելով ինչպես գրասենյակային վերլուծության մեթոդը, (ներառյալ համապատասխան գրականության հայտնաբերում և ուսումնասիրություն), այնպես էլ տարբեր կառույցների և փորձագետների հետ խորը հարցազրույցի մեթոդաբանությունը, ինչպես նաև այլ երկրների նմանատիպ կառույցների հետ զրույցները:<br>Միաժամանակ, Հայաստանի և Գերմանիայի միջև 2024թ. կայացած միջկառավարական | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | խորհրդակցությունների ընթացքում առաջարկվել է քննարկել Մեծածախ շուկայի ստեղծման ներդրումային ծրագրի մշակման հարցում տեխնիկական աջակցության տրամադրման հնարավորո-թյունը, և գերմանական կողմի հետաքրքրվածության արդյունքում ներկայացվել է մեծածախ շուկայի և լոգիստիկ կենտրոնի ստեղծման նախարարության կողմից առաջարկվող մոդելի անգլերեն տարբերակը:<br>ՀՀ մարզպետների աշխատակազմերից ստացված՝ մարզերում 2024թ. ընթացքում միջազգային կառույցների աջակցությամբ կամ մասնավոր ներդրումներով ստեղծված, գործարկված, կառուցման փուլում գտնվող և առաջիկայում պլանավորված սառնարանային պահեստավորման վերաբերյալ տեղեկատվության համաձայն.<br>1) Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքում առկա են 15 սառնարանային պահեստ, կառուցման փուլում է գտնվում 4-ը,<br>2) Կոտայքի մարզի Ձորաղբյուր համայնքում առկա են 2 սառնարանային պահեստ, կառուցման փուլում է գտնվում շուրջ 12-ը,<br>3) Շիրակի մարզում կառուցման փուլում է գտնվում 2 սառնարանային պահեստ,<br>4) Արմավիրի մարզի Արմավիր համայնքում առկա է 1, Փարաքար համայնքում 3 սառնարանային պահեստ, կառուցման փուլում է գտնվում 1-ը,<br>5) Գեղարքունիքի մարզում առկա են 12 սառնարանային տնտեսություններ՝ 3446 տոննա ընդհանուր տարողությամբ:<br>Ընդհանուր առմամբ, ներկայումս ՀՀ-ում գործում է շուրջ 1619 սառնարանային պահեստ: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Գերմանիայի Դաշնության Բեռլին քաղաքում ստեղծվել է մեկ հավաքական պահեստ և Եվրոպայում հայկական գինիների առցանց վաճառքի հարթակ, որը հասանելի է winesofarmenia.store կայքով: Հարթակի առաջմղման և ճանաչելիության բարձրացման նպատակով իրականացվում են սոցիալական մեդիա արշավներ: Տարեսկզբից Ինստագրամ և Ֆեյսբուք սոցիալական ցանցերում՝ անգլերեն և գերմաներեն լեզուներով իրականացվել են սոցիալական մեդիա արշավներ:<br><br>**Հումքի մթերման գործընթացին, կոնյակի ու կոնյակի սպիրտի արտահանմանն աջակցություն, ինչպես նաև գինեգործության ու կոնյակագործության արտադրության խթանման արդյունքում առաջիկա 5 տարիներին հումքի մթերման և թողարկվող արտադրանքի ծավալների ավելացում մինչև 50 %-ով կամ տարեկան շուրջ 10%-ով**<br>Կառավարության 2019թ. փետրվարի 28-ի N 201-Լ որոշմամբ հաստատված Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում 2024թ. հաստատվել է 214 հայտ՝ շուրջ 16.9 մլրդ դրամի չափով, որոնց շրջանակներում գյուղացիական տնտեսությունների հետ կնքվել են 8037 հատ բերքի գնման պայմանագիր:<br>Բացի այդ, Ծրագրում կատարվել է համապատասխան լրացում, որով խաղողի մթերումների նպատակով տրամադրվող վարկերի գծով տնտեսավարողների մոտ ապահովման միջոցի ոչ բավարար մակարդակի դեպքում Կառավարության | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կողմից նախատեսվել է 2024թ. օգոստոսի 1-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 30-ը տրամադրել մինչև 50%-ի չափով բյուջետային երաշխիք, բայց ոչ ավելի, քան 2023թ. արտահանված արտադրանքի արժեքը: Բյուջետային երաշխիքից օգտվել է 4 շահառու՝ շուրջ 3.1 մլրդ դրամի չափով:<br>Ձեռնարկված միջոցառումների արդյունքում խաղողի մթերումներն ընթացել են առանց խոչընդոտների և մթերվել է շուրջ 165.0 հազար տոննա խաղող:<br>2024թ. մթերվել է շուրջ 67.4 հազար տոննա պտուղբանջարեղեն, որից՝ շուրջ 31.5 հազար տոննա բանջարեղեն և 35.9 հազար տոննա պտուղ:<br>2024թ. 10 ամիսներին սննդամթերքի և խմիչքների արտադրության ծավալը կազմել է շուրջ 674.1 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել է 23.7 մլրդ դրամով կամ շուրջ 4 %-ով:<br><br>**Գյուղատնտեսական հումք մշակող ընկերությունների արտադրական կարողությունների հզորացում և արդիականացում՝ տարեկան շուրջ 250 միավոր սարքավորումների ձեռքբերմանն աջակցություն**<br>Կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-Լ որոշմամբ հաստատված ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի շրջանակներում շարունակվում է մատչելի մեխանիզմների կիրառմամբ ագրոպարենային ոլորտի սարքավորումների տրամադրումը տնտեսավարողներին: Ծրագրի շրջանակներում 2024թ. հաստատվել է 149 լիզինգի հայտ՝ 5 մլրդ դրամ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ծավալով, որոնց շրջանակներում ձեռք է բերվել 429 միավոր սարքավորում:<br><br>**Գինեգործական արտադրանքի ճանաչելիության բարձրացման միջոցառումների միջոցով 2 անգամ արտահանման ծավալների ավելացում կամ տարեկան 20%-ով աճ**<br>Հայկական արտադրանքի ճանաչելիության բարձրացման, գործարար նոր կապերի հաստատման և համագործակցությունների ձեռքբերման, արտադրանքի արտահանման ծավալների աճի խթանման նպատակով ապահովվել է մասնակցություն՝<br>1) ԳԴՀ-ի Բեռլին քաղաքում 2024թ. հունվարի 19-28-ը կայացած «Կանաչ շաբաթ 2024» գյուղատնտեսական միջազգային ամենամյա ցուցահանդեսին,<br>2) ԳԴՀ-ի Բեռլին քաղաքում 2024թ. հունվարի 19-28-ը կայացած հայկական գինիների համտես-շնորհանդեսին,<br>3) ԱՄԷ-ի Դուբայ քաղաքում 2024թ. փետրվարի 19-ին կայացած «Gulfood-2024» սննդի և խմիչքների 29-րդ միջազգային ցուցահանդեսին,<br>4) ԳԴՀ-ի Դյուսելդորֆ քաղաքում 2024թ. մարտի 10-12-ը կայացած «ProWein 2024» սննդի, խմիչքների և հումքի միջազգային ցուցահանդեսին,<br>5) Իտալիայի Միլան քաղաքում 2024թ. ապրիլի 22-ին կայացած Արցախի գինիների համտեսին, որի շրջանակներում Միլանում գտնվող Իտալիայի սոմելիեների ասոցիացիայի գլխամասում (www.aislombardia.it) տեղի է ունեցել «Արցախի գինիներ՝ համի վերջին վկաները» խորագրով | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | արցախյան խաղողագործության վարպետության դասը,<br>6) Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2024թ. հունիսի 2-ին կայացած Merano գինու փառատոնին (Merano Wine Festival Georgia),<br>7) Մեքսիկայի Գուանախուատո նահանգում 2024թ. հունիսին կայացած 31-րդ Concours Mondial de Bruxelles կարմիր և սպիտակ գինիների մրցույթին,<br>8) ԱՄՆ Նյու Յորք քաղաքում 2024թ. հունիսի 25-26-ը կայացած «Vinexpo New York 2024» գինու միջազգային ամենամյա ցուցահանդեսին,<br>9) Դիլիջան քաղաքում 2024թ. օգոստոսի 3-4-ը կայացած DILIJAN WINE FEST 2024 փառատոնին: Փառատոնի ծրագիրը ներառել է գինու համտես, համերագային ծրագիր, խաղողի տրորման արարողություն, գինով նկարչություն, գինու կազինո, կինոցուցադրություն, կոկտեյլներ պատրաստելու վարպետաց դաս և սաբրաժ,<br>10) Լատվիայի Ռիգա քաղաքում 2024թ. սեպտեմբերի 6-ին կայացած «Riga Food 2024» սննդի, խմիչքների, սննդի վերամշակման տեխնոլոգիաների, փաթեթավորման, նորարարության, ՀՈՌԵԿա և խանութների սարքավորումների և ծառայությունների 29-րդ միջազգային ցուցահանդեսին,<br>11) Սաուդյան Արաբիայի Ռիադ քաղաքում 2024թ. սեպտեմբերի 16-ին կայացած «Foodex Saudi-2024» միջազգային ցուցահանդեսին,<br>12) Ֆրանսիայի Փարիզ քաղաքում 2024թ. հոկտեմբերի 19-ին կայացած «Սիալ 2024» սննդի և խմիչքի 60-րդ միջազգային ցուցահանդեսին, | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 13) ՉԺՀ Շանհայ քաղաքում 2024թ. նոյեմբերի 5-10-ը կայացած «Չինաստանի 7-րդ միջազգային ներմուծման» ցուցահանդեսին (CIIE),<br>14) գինու զբոսաշրջության 8-րդ համաշխահային համաժողովին: Համաժողովը միտված է նպաստելու Հայաստանի՝ որպես գինու հնագույն օրրանի ճանաչելիության բարձրացմանն ու միջազգային հարթակներում դիրքավորմանը, Հայաստանի ներուժը ոլորտի գիտակներին ներկայացնելուն, ոլորտում տեղեկատվության և փորձի փոխանակմանը,<br>15) Խաղողագործության և գինեգործության միջազգային կազմակերպության (OIV) 100–ամյակի միջոցառմանը:<br>Բացի այդ՝<br>1) Շարունակվել է Grape Collective ամսագրում հրապարակումների շարքը և գինու բրիտանացի լրագրող Յակոպո Մացեոն ամերիկյան հանրահայտ Wine Country International Magazine էլեկտրոնային պարբերականում հրապարակել է հայկական գինեգործության մասին պատմող արդեն երկրորդ հոդվածը,<br>2) Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը հայտ է ներկայացրել և հաջողությամբ ընդգրկվել է ROTOBO (Japan Business Association ROTOBO) կողմից ներկայացված և Ճապոնիայի ԷԱԱ նախարարության կողմից ֆինանսավորվող «Business Matching» ծրագրում, որի միջոցով հնարավորություն է ստացել 2025թ. մարտի 11-14-ը ազգային միասնական տաղավարով հայկական գինեգործական 10 ընկերության | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ներկայացնել Տոկիոյում կայանալիք FOODEX JAPAN 2025 ցուցահանդեսին,<br>3) Երևանի «Անուշ» ռեստորանում 2024թ. ապրիլի 19-ին Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից ներկայացվել է ուտեստի և գինու համադրության գաղտնիքները՝ բացահայտելու գինու շուրջ հյուսվող լեգենդները և իրականացվել է գինու համտես:<br>Հարկ է նշել, որ 2019թ. արտահանվել է շուրջ 2.8 մլն, իսկ 2023թ.՝ շուրջ 4.3 մլն լիտր գինի, կամ գինու արտահանման ծավալը 2023 թվականին 2019 թվականի համեմատությամբ ավելացել է շուրջ 1.5 մլն լիտրով կամ 55.2 %-ով:<br><br>**Աշխարհագրական նշումների մասին օրենքի բարելավման միջոցով ոլորտային ասոցիացիաների ստեղծման խթանում և տարեկան 2-3 անվանում հայկական նշումներով արտադրանքի արտադրություն և գրանցում**<br>«Հայկական մածուն», «Հայկական լավաշ», «Հայկական բաստուրմա» և «Հայկական սուջուխ» աշխարհագրական նշումով արտադրանքը Մտավոր սեփականության գրասենյակ գրանցման հայտ ներկայացնելու նպատակով անհրաժեշտ է ունենալ հավատարմագրված սերտիֆիկացնող մարմիններ: Այդ գործընթացն ապահովելու նպատակով մշակվել և Արդարադատության նախարարություն է ներկայացվել Աշխարհագրական նշումով արտադրանքի սերտիֆիկացման կարգը, որի հաստատվելուն կհաջորդի սերտիֆիկացնող մարմինների հավատարմագրման և գրանցման գործընթացները: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 9.6 Սննդամթերքի անվտանգության ապահովում «Սննդամթերքի անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում | **Հայաստանի Հանրապետությունում սննդամթերքի անվտանգության ապահովում**<br>ՀՀ ԷՆ կողմից մշակվել, շրջանառվել և ընդունվել են սննդամթերքի անվտանգության ապահովմանն ուղղված հետևյալ իրավական ակտերը՝<br>- ««Անասնաբուժության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը;<br>- ««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Կերի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը;<br>- «Կերային հավելումների պետական գրանցման, մերժման, կասեցման և դադարեցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը,<br>- «ՀՀ կառավարության 2006թ. հունիսի 29-ի N 993-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը;<br>- «ՀՀ կառավարության 2010թ. հոկտեմբերի 21-ի N 1442-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:<br>ՀՀ կառավարության կողմից հավանություն է տրվել և սահմանված կարգով ներկայացվել է Ազգային ժողով՝<br>- ««Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը;<br>- ««Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը,<br>- ՀՀ կառավարության 2024 թվականի փետրվարի 23-ի «Ոչ սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումքի և մթերքի առգրավման և ոչնչացման կարգը սահմանելու մասին» N 257-Ն որոշումը:<br>Մշակվել և շրջանառվել են.<br>- «ՀՀ կառավարության 2007թ. ապրիլի 26-ի N 504-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը;<br>- «Գիտական կազմակերպությանը (կենտրոնին) ռիսկի գնահատում իրականացնելու լիազորություններ տալու, կասեցնելու կամ դադարեցնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը;<br>- «ՀՀ կառավարության 2023թ. մարտի 23-ի N 356-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը;<br>- «Վտանգավոր սննդամթերքի և կերի օգտահանման ու ոչնչացման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի N 1060-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը;<br>- «Այլ պետությունների ռեֆերենս փորձարկումներ իրականացնող լաբորատորիաների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը; | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | - «Վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի սկզբունքների հիման վրա համակարգի ներդրման ուղեցույցների հաստատման մասին» ՀՀ Էկոնոմիկայի նախարարի հրամանի նախագիծը: | | |
| | | 9.7 Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում | **Վնասակար օրգանիզմների ներթափանցման և (կամ) տարածման կանխում, գյուղատնտեսական նշանակության հողերի բուսասանիտարական վիճակի բարելավում: 2024 թվականին նախատեսվում է գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից հողանմուշի լաբորատոր փորձաքննությունների իրականացում՝ 32200 հատ, կազմված 85 հատ ագրոքիմիական քարտեզների և գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերի տրամադրում, ինչպես նաև՝ բույսերի հիվանդությունների, վնասատուների, մորեխների և մկնանման կրծողների հայտնաբերման նպատակով ՀՀ համայնքների 180000 հա գյուղատնտեսական նշանակության հողատես-քերում մշտադիտարկման աշխատանքների իրականացում, որից՝ 90000 հա մկնանման կրծողնե-րի, 60000 հա մորեխների, 5000 հա հացահատիկային փոշեմրիկի և ժանգի, 15000 հա պտղատուներ, 5000 հա բանջարաբոստանային և 5000 հա խաղողի այգիների: ՀՀ մարզերի առավել վարակված շուրջ 53000 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում մկնանման կրծողների մորեխների, ծղրիդների, հունիսյան բզեզի և օկնոգինա թրթուր-ների դեմ պայքարի աշխատանքներ իրականացնելու նպատակով, մոնիթորինգի տվյալների հիման վրա ՀՀ մարզերին անհատույց կտրամադրվի մկնասպան և միջատասպան թունանյութեր** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ՀՀ ԷՆ «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից բույսերի հիվանդությունների, վնասատուների և մկնանման կրծողների հայտնաբերման նպատակով ՀՀ համայնքների 242500 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում և գյուղատնտեսական նշանակության հողատեսքերին հարող անմշակ տարածքներում իրականացվել են մշտադիտարկման աշխատանքներ: Միաժամանակ մարզերում տեղադրվել են 558 հատ արևելյան պտղակերի, 207 հատ խնձորենու պտղակերի և 294 հատ խաղողի ողկույզակերի ֆերոմոնային թակարդներ՝ հնդավորների, կորիզավորների և խաղողի վազի վնասատուների ժամանակին հայտնաբերման նպատակով:<br>Մշտադիտարկման արդյունքների հիման վրա ՀՀ մարզերի առավել վարակված շուրջ 110437.5 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում և գյուղատնտեսական նշանակության հողատեսքերին հարող անմշակ տարածքներում մկնանման կրծողների, մորեխների և այլ առավել վտանգավոր վնասակար օրգանիզմների դեմ պայքարի աշխատանքների իրականացման նպատակով ՀՀ մարզերին անհատույց տրամադրվել են 8685 լիտր մկնասպան և 375 լիտր միջատասպան թունանյութեր:<br>Գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի ագրոքիմիական հետազոտությունների իրականացման նպատակով հողերից վերցվել են հողանմուշներ, կատարվել են 32200 հատ լաբորատոր փորձաքննություններ՝ հողում մակրո- և միկրոտարրերի քանակները որոշելու նպատակով և | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | համայնքներին տրամադրվել են 85 ագրոքիմիական քարտեզներ՝ իրենց հրահանգներով: | | |
| | | 9.8 Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի իրականացում | **Անասնահամաճարակային կայուն իրավիճակի ապահովում, կենդանական ծագման հումքի և մթերքի որակի բարելավում, արտադրության ծավալների ավելացում, 2023-2025թթ. շուրջ 14 մլն հատ պատվաստում, այդ թվում 2024թ.՝ 4 445 399 հատ միջոցառում**<br>2024 թվականին կատարվել է 5 040 753 հատ միջոցառում, որից<br>ախտորոշիչ՝ 849 693<br>կանխարգելիչ՝ 4 191 060 | | |
| | | 9.11 Հողային ռեսուրսների նպատակային և ջրային ռեսուրսների խնայողական ու արդյունավետ օգտագործում | **Գյուղատնտեսական նշանակության հողերը արդյունավետ օգտագործելու, չօգտագործվող հողերը շրջանառության մեջ ներառելու, հողերի խոշորացման նպատակով միջոցառումների մշակում և իրականացում**<br>ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2025 թվականների ծրագրով նախատեսված էր փոխհատուցել մելիորացիայի ծախսերի 50%-ը՝ 30-200 հա հողերի կոնսոլիդացման դեպքում, որի արդյունքում կնքվել է 3 պայմանագիր՝ ընդհանուր 160 հա-ի համար:<br>Ծրագրի լավարկման նպատակով կատարվել է ծրագրային փոփոխություն, համաձայն որի 2024թ. հունիսի 14-ից՝ 5-200 հա հողատարածք ձեռք բերելու և միավորելու դեպքում կփոխհատուցվի այդ հողատարածքների կադաստրային արժեքի 30%-ը: Արդյունքում, ընդհանուր կնքվել է 13 պայմանագիր, որից 3-ը ծրագրի հին տարբերակով (1-ը՝ 30-100 հա, 2-ը՝ 10-30 հա), իսկ ծրագրի լավարկված տարբերակով կնքվել է 10 պայմանագիր, որից 1-ը | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 30-100 հա, իսկ 9-ը՝ 5-30 հա հողերի կոնսոլիդացման նպատակով:<br><br>**Ոռոգման առաջադիմական տեխնոլոգիաներով ոռոգելի հողատարածքների ավելացում՝ շուրջ 3000հա-ով, 2024թ-ին՝ շուրջ 1000 հա-ով**<br>Ինտենսիվ այգեգործության զարգացման ծրագրի շրջանակում 2024թ. փոխհատուցման և վարկային բաղադրիչներով կնքվել են այգեհիմնման (այգեհիմնման դեպքում պարտադիր է ոռոգման առաջադիմական համակարգի ներդրումը) և ոռոգման արդիական համակարգերի ներդրման շուրջ 1664.6 հա-ի համար պայմանագրեր:<br>Զարգացման Ֆրանսիական Գործակալության /ԶՖԳ/ աջակցությամբ իրականացվող և Եվրոպական Հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող «Հայաստան-Ոռոգվող գյուղատնտեսության զարգացումը Արարատի և Արմավիրի մարզերում» Ծրագրի շրջանակներում ընտրված Օպերատորի /բելգիական A.E.S.A JV/ կողմից ձևավորվել են գյուղատնտեսական աջակցության խորհրդատվական երեք թիմեր, իրականացվել են Ծրագրի մեկնարկի աշխատանքներ: | | |
| | | 9.12 Աջակցություն գիտակրթական համակարգերին, թվային գյուղատնտեսության զարգացմանը և շուկայի պահանջներին համապատասխան կադրերի պատրաստմանը | **1.Աջակցություն գիտակրթական համակարգերի բարելավմանը**<br>**2023թ.-ին՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում և իր մասնաճյուղերում՝ 1 ջերմատուն, 1 ինտենսիվ այգի, եղանակային կայան, հողի անալիզի լաբորատորիա, 1 խելացի անասնաշենք, 3 սննդագիտության լաբորատորիա** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կողմից ԱՄՆ ՄԶԳ «Նորարարական գյուղատնտեսության վերապատրաստման և ուսուցման ճամբար (ԱԳՐԻ ՔԵՄՓ) ծրագիր» ծրագրի գյուղատնտեսական տվյալների ու քարտեզագրման համակարգի նախագծում և փորձարկում բաղադրիչի շրջանակում մշակվում է երկրատեղեկատվական համակարգերի և հեռահար զոնդավորման հնարավորությունների օգտագործմամբ թվային երկվորյակ տեխնոլոգիա գյուղատնտեսության համար որպես նորարար և համապարփակ հարթակ՝ սեզոնային բերքի արդյունավետ կառավարման և ֆերմերային տնտեսությունների գործունեության օպտիմալացման համար: Տվյալ գործիքն ու հարթակը կրում են AgroTwin անվանումը: AgroTwin հարթակը կներառի տվյալների մի քանի վահանակներ, որոնք թույլ կտան քաղաքականություն մշակողներին, ֆերմերներին, ներդրողներին և գյուղատնտեսության հետազոտողներին մոդելավորել, պլանավորել ու վերլուծել՝ արդյունավետ որոշումներ կայացնելու, օպտիմալ քաղաքականություն մշակելու, պարենային անվտանգությունը բարելավելու և գյուղատնտեսությունն ավելի կայուն դարձնելու համար:<br><br>**2. Թվայնացված տվյալների շտեմարանի առկայություն. 2023 թ-ին՝ թարմացում, 2024 թ-ին՝ թարմացում 5-6 անգամ, տվյալների ներառում՝ եռամսյակային, տարեկան և ըստ անհրաժեշտության**<br>Մշակվել և Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում հրապարակվել են Էկոնոմիկայի նախարարի 2024թ. ապրիլի 22-ի «ՀՀ էկոնոմիկայի նախարարության տարածական տվյալների ֆոնդի ստեղծման, պահպանման և | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | տեղեկատվության տրամադրման կարգը սահմանելու մասին» N 1113-Ն և մայիսի 2-ի «ՀՀ էկոնոմիկայի նախարարության տարածական տվյալների և ծառայությունների մետատվյալների ստեղծման, պահպանման և թարմացման կանոնները սահմանելու մասին» N 1193-Ն հրամանները:<br>Կադաստրի կոմիտեի կողմից վարվող Ազգային գեոպորտալին ինտեգրվելու և գյուղատնտեսությանն առնչվող թեմատիկ շերտերի ստեղծման, վարման և ընդլայնման նպատակով մշակվել է «Խաղողի տնկարկ» թեմատիկ շերտի ստանդարտը և շրջանառվել է «ՀՀ կառավարության 2022թ. հոկտեմբերի 6-ի N 1569-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ներկայացվել է Կադաստրի կոմիտե՝ վերջինիս կողմից շրջանառվող «ՀՀ կառավարության 2022թ. հոկտեմբերի 6-ի N 1569-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծում ներառելու նպատակով: Նախագծի նոր փաթեթը Կադաստրի կոմիտեի կողմից ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:<br>Գյուղատնտեսության թվայնացման նպատակով՝ ArcGIS Enterprise (կայքէջի հասցե՝ https://maps.mineconomy.am/) սերվերում տեղադրվել են մի շարք գյուղատնտեսական տարածական շերտեր, որոնք դեռևս գործում են փորձնական ռեժիմով (հետագայում ստեղծվելիք շերտերը ևս նախատեսվում է տեղադրել այստեղ): Ներկայումս տեղադրված են շերտեր «Խելացի» անասնաշենքերի և ինտենսիվ այգեգործության ծրագրերի շահառուների վերաբերյալ: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 2024թ. քարտեզագրվել և դասակարգվել են գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության մի շարք ծրագրերի շրջանակում Էկոնոմիկայի նախարարություն ներկայացվող փաստաթղթերը և ներկայացվել են «Հայաստանի տեղեկավական համակարգերի գործակալություն» հիմնադրամին: Ստեղծվել են ծրագրին դիմելու ընթացակարգի թվայնացման, պայմանագրի և համաձայնագրի կնքման գործընթացների թվայնացված դիզայնի օրինակի նախատիպային, ինչպես նաև ծրագրի շրջանակում կատարվող տեղազննության և մոնիթորինգի արձանագրությունների թվայնացման նախնական տարբերակները: Այժմ աշխատանքներ են տարվում այս հարցը Թվայնացման խորհուրդ ներկայացնելու վերաբերյալ, որի նպատակով մշակված սահիկաշարը և կից տեղեկանքը կարծիքի են ներկայացվել ԲՏԱՆ և ՀՏՀԳ:<br>Փաստահենք հիմքի վրա քաղաքականության մշակման օժանդակման շրջանակներում ստեղծված agridata.am կայքի հոստինգը տեղափոխվել է Նախարարության սերվերների վրա և դրա հիման վրա գործարկվել է agridata.mineconomy.am կայքը, որն առաջիկայում, տեխնիկական վերազինման և արդիականացման աշխատանքներից հետո հասանելի է լինելու Նախարարության գյուղատնտեսության ոլորտի քաղաքականությունը մշակող ստորաբաժանումների համար:<br><br>**3. Խորհրդատվական և տեղեկատվական ծառայությունների մատուցման արդյունավետ մեխանիզմների մշակում և ներդրում, գիտելիքահենք գյուղատնտեսության խթանում,** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **2023թ.՝ կարճաժամկետ վերապատրաստումներ՝ շուրջ 500 գյուղատնտեսությունում տնտեսավարողների մասնակցությամբ, 2024թ.՝ կարճաժամկետ վերապատրաստումներ՝ շուրջ 500 գյուղատնտեսությունում տնտեսավարողների մասնակցությամբ**<br>2024թ. պատասխանվել է գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագերի և ոլորտին վերաբերող այլ թեմաներով շուրջ 1800 զանգի:<br>2024թ. մայիսից սկսած հանրապետության 9 մարզում շուրջ 50 հանդիպման ընթացքում իրականացվել են քննարկումներ, որոնց ժամանակ ներկայացվել են պետական աջակցության ծրագրերը:<br>Նախարարության աշխատակիցների կողմից իրականացվել են հանդիպումներ մարզային քոլեջների սովորողների հետ, որոնց մասնակցել են Մարալիկում շուրջ 30 ուսանող, Ստեփանավանում՝ 40 ուսանող, Բերդում՝ 25 ուսանող, Վարդենիսում՝ 25 և Գավառում՝ 20 ուսանող:<br>Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կողմից 2024թ. հունվարի 1-ից իրականացված կարճաժամկետ վերապատրաս-տումների արդյունքում շուրջ 807 երիտասարդ վերա-պատրաստվել է հետևյալ ուղղություններով՝<br>– բուսաբուծական մթերքների վերամշակում՝ պահածոյացման տեխնոլոգիաներ,<br>– դեկորատիվ բույսերի ագրոտեխնոլոգիա և լանդշաֆտային դիզայն,<br>– տրակտորիստ-մեքենավարներ,<br>– հացատեսակների և հրուշակեղենի արտադրություն,<br>– շոկոլադագործություն,<br>– ձկնաբուծություն, | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | – չրագործություն,<br>– քրաֆտ գարեջրագործություն,<br>– մեղվաբուծության հիմունքներ,<br>– ԱԹՍ-ների կիրառմամբ գյուղատնտեսական սրսկումների իրականացում,<br>– պտղաբուծություն. Դասավանդման ժամանակակից մեթոդներ,<br>– ջերմատնային մշակաբույսերի մշակություն և կառավարում: | | |
| 10 | Զբոսաշրջության Զարգացում<br><br>Տարեկան 2.5 մլն զբոսաշրջիկի այցելություն,<br><br>20 զբոսաշրջային կլաստերների զարգացում,<br><br>50 պատմամշակութային օբյեկտների վերականգնում | 10.1 «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի և օրենքի ընդունումից բխող մի շարք իրավական ակտերի նախագծի մշակում և իրականացում | 2023 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունվել է «Զբոսաշրջության մասին» ՀՕ-4-Ն ՀՀ օրենքը: Նոր օրենքի ընդունումից բխող մշակվել են մի շարք իրավական ակտեր՝<br>-ՀՀ Կառավարության 2024 թ հոկտեմբերի 10 -ին ընդունվել է «Հյուրանոցային ծառայություն մատուցող անձի կողմից առցանց կամ այլ հարթակներում հյուրանոցային ծառայությունների գովազդներում կամ հյուրանոցային ծառայություն մատուցելու մասին իր կողմից տարածվող հայտարարություններում, ինչպես նաև հյուրանոցային տնտեսության օբյեկտում տեղադրվող տեղեկատվությանը ներկայացվող չափանիշները և տեղեկատվության տեղադրման կարգը սահմանելու մասին» N1613-Ն որոշումը:<br><br>2024 թվականի ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի կողմից մշակվել և հաստատվել են նաև հետևյալ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝<br><br>- ՀՀ էկոնոմիկայի նախարարի՝ 2024 թվականի սեպտեմբերի 6-ի N 2240-Լ հրաման «Զբոսաշրջային կենտրոններ կամ զբոսաշրջային գյուղեր հայտարարելու համար պահանջվող նվազագույն չափանիշները, այդ թվում՝ քաղաքաշինական և բնապահպանական հատուկ նորմերը, | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | զարգացման նպատակները, խնդիրները, միջոցառումները հաստատելու մասին».<br>- ՀՀ էկոնոմիկայի նախարարի՝ 2024 թվականի օգոստոսի 7-ի N 2014-Լ հրաման «Սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայությունում ընդգրկվող զբոսաշրջային օպերատորների հաշվառման, սոցիալական փաթեթի հանգստի ծառայության հաշվետվողական էլեկտրոնային համակարգում ընդգրկման և հաշվառված զբոսաշրջային օպերատորներին հաշվառումից հանելու կարգը հաստատելու և ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 30-ի N1567-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»:<br>2024 թվականի ընթացքում ԱՄՆ ՄԶԳ հետ համագործակցությամբ մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ են ներկայացվել նաև «Զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից զբոսաշրջային ծառայությունների մատուցման կանոնները և պահանջները սահմանելու մասին» և «Զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց վերաբերյալ էլեկտրոնային գրանցամատյանում գրանցված զբոսաշրջային ծառայություններ մատուցողների տեղեկատվության բովանդակությունը, ներկայացման և վարման կարգն ու ձևերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը: | | |
| | | 10.2. «Հայաստանի զբոսաշրջության 2022-2030 թթ. ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման | ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեի կողմից մշակված «Զբոսաշրջության զարգացման 2025-2029թթ ռազմավարական ծրագիրը և ռազմավարական ծրագրի գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը քննարկվել է 2024 թվականի օգոստոսի 28-ին ՀՀ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | նախագծի հաստատում և իրագործում | վարչապետի մոտ կայացած խորհրդակցության ընթացքում: Արդյունքում՝ որոշվել է նախագիծը լրամշակել՝ առավել հստակեցնելով նախատեսվող գործողությունները:<br>Այնուհետև, հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջիկայում ՀԲ աջակցությամբ նախատեսվում է իրականացնել «Զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների բարելավման» ծրագիրը և կարևորելով նշված ծրագրի ամբողջական համապատասխանությունը ռազմավարական ծրագրի նախագծի հետ, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը ստացել է ՀՀ վարչապետի համաձայնությունը նախագծի՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելու ժամկետը մինչև 2025 թվականի հուլիսի 1-ը երկարաձգելու վերաբերյալ: | | |
| | | 10.5. Ներգնա զբոսաշրջության զարգացում | 2024 թվականի հունվար-նոյեմբերին զբոսաշրջային այցելությունների ընդհանուր քանակը կազմել է շուրջ 2,078,031: 2023 թվականի հունվար-նոյեմբերի 2,195,201 համեմատ նվազել է մոտ 5 %, իսկ 2019 թվականի հունվար-նոյեմբերի 1,815,668 համեմատ աճել է շուրջ 14 %:<br>Պետական աջակցությամբ ապահովվել է Հայաստանը և հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացնող միասնական տաղավարով զբոսաշրջային օպերատորների մասնակցությունը միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին.<br>• ITB Berlin - 2024 (10 զբոսաշրջային ընկերություն)<br>• Arabian Travel Market 2024 Դուբայ (23 զբոսաշրջային ընկերություն)<br>• ITB ASIA - 2024 Սինգապուր (7 զբոսաշրջային ընկերություն)<br>World Travel Market London 2024 (7 զբոսաշրջային ընկերություն) | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | «Համագործակցություն միջազգային գործընկերների հետ» միջոցառման շրջանակներում համագործակցություն է ապահովվել Wizz Air, BBC Global News, EuroNews և Expedia միջազգային գործընկերների հետ:<br>Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն իր իրավասությունների շրջանակներում մշտական աշխատանքներ է իրականացնում օտարերկրյա նոր ավիաընկերությունների ներգրավման ուղղությամբ՝ ներկայացնելով այն լրացուցիչ խթանները, որոնք կարող են նպաստավոր ազդեցություն ունենալ նշված գործընթացի իրականացման համար, այդ թվում՝ «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» ենթակետով սահմանված արտոնություն ստանալու հնարավորությունը: | | |
| | | | Կազմակերպվել են ընդհանուր թվով 90 մեդիա ներկայացուցիչների, բլոգերների և ինֆլյուենսերների դեպի Հայաստան ճանաչողական այցեր, ովքեր այցելել են Հայաստանի մի շարք զբոսաշրջային վայրեր՝ ծանոթանալով Հայաստանի զբոսաշրջային ներուժին, զբոսաշրջիկներին առաջարկվող տարաբնույթ զբոսաշրջային արդյունքին, հայ մշակույթին ու ավանդույթներին:<br>Իրականացվել են ճանաչողական այցեր հետևյալ երկրներից՝<br><br>**Ռուսաստան՝ НТВ** հեռուստաընկերության «Поедем, Поедим» հեռուստածրագրի նկարահանող թիմի և Marie Claire, Aeroflot Premium, RBC Style, S7, Tonkosti Turizma պարբերականներից լրագրողների համար<br><br>**Ֆրանսիա՝ 10** պարբերականների լրագրողների և 1՝Alexia Cuisine Le Monde" հեռուստանախագծի նկարահանող թիմի համար, Հայաստանին նվիրված հաղորդումը հեռարձակվելու է 2025թ. առաջին եռամսյակի ընթացքում | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **Գերմանիա՝** 4 հայտնի պարբերականների լրագրողների համար՝ Prestige Travel, Mortimer Reisemagazin, Passauer Neue Presse Niederbayerische, Rhein-Neckar-Zeitung<br><br>**Բելգիա՝** 2024 թվականի հունիսին կազմակերպվել է ճանաչողական այց Հայաստանում Michelin guide ընկերության Բենիլյուքսի և Թուրքիայի տարածաշրջանային նախկին տնօրեն Վերներ Լեոնսի համար<br><br>**Իտալիա՝** մոտ14՝ Il Giornale, Italia a tavola, Vanity Fair, Repubblica, Reporter Gourmet,Viaggiare con Gusto Sano, SiViaggia.it, Askanews, Avvenire, Lonely Planet, QN, Osserva Viaggi, La Repubblica A&F, Panorama.it, Weekend Premium, RAI Radio1լ պարբերականների լրագրողների և "RAI 3 - Kilimanjaro" հեռուստանախագծի նկարահանող թիմի համար<br><br>**Արաբական երկրներ՝** 5՝ է CNN, ELLE EGY, The National, Jamila, Al Watan պարբերականների լրագրողների համար<br><br>**ԱՄՆ՝** Matador, LA Times, և այլ պարբերականների լրագրողների համար<br><br>**WizzAir Hungary** ավիաընկերության միջնորդությամբ կազմակերպվել է Roadster, HVG, NorinAround, Papírszárnyak, Forbes, 24.hu, Player.hu պարբերականների լրագրողների համար<br><br>**Բրիտանական** «**BBC**» լրատվական ընկերության ներկայացուցիչների համար | | |
| | | | -Կազմակերպվել են գովազդային արշավներ/ փոխճանաչողական այցեր (road show) թիրախային 3 առանցքային երկրներում՝ Ռուսաստանի Դաշնությունում Մոսկվա և Սանկտ-Պետերբուրգ քաղաքներում, Իսպանիայում Մադրիդ և | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Բարսելոնա քաղաքներում և Ճապոնիայում՝ Տոկիո քաղաքում | | |
| | | | Հեղինակավոր պարբերականներում և հայտնի ամսագրերում Հայաստանի զբոսաշրջային գրավ-չությունները ներկայացնող հոդվածներ են հրապարակվել: Մասնավորապես՝<br><br>Բրիտանական National Geographic և Wanderlust պարբերականում<br><br>Գերմանական (Reise vor9, Prestige Travel Web, Mortimer Travel Magazine և այլն) Իտալական (La Repubblica, Huff Post Italia, Tgcom24 (Mediaset), Vanity Fair Italia, Askanews և այլն)<br><br>Ֆրանսիական (Le Quotidien du Tourisme, La Voix du Nord, Masculin.com, Lonely Planet.fr, Easyvoyage, L'Est Republican)<br><br>Ռուսական (The Voice Mag, Voyage Magazine, Travel.mts.ru, Tonkosti Turizma, Timeout.ru, Aeroflot Premium, Marie Claire և այլն)<br><br>Արաբական (Khaleej Times, HIA, TTN, Emirates Woman, Gulf News, Al Khaleej<br><br>պարբերականներում | | |
| | | | Ապահովվել են գովազդատեղեկատվական նյութերի ստեղծման և տպագրության աշխատանքները:<br>75 հազար և ավել տպաքանակով գովազդատեղեկատվական նյութեր են տպագրվել /«Արմենիա» կատալոգ (մեծ և փոքր), ՀՀ մարզերը ներկայացնող կատալոգներ, «Armenia The Hidden Track» բրենդով նոթատետրեր, քարտեզներ և այլն/: Տարածվել են տարբեր հարթակներում, միջազգային ցուցահանդեսներում և Զբոսաշրջության կոմիտեի կողմից կազմակերպված միջոցառումներում: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Իրականացվել են Armenia.travel վեբ – կայքի https://armenia.travel/ սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում, տեքստային բովանդակության մշակում. | | |
| | | | Տրամադրվել է պետական աջակցություն 12 փառատոների իրականացմանը.<br>*«Ն**ավասարդ**» հայ-իրանական մշակութային-խոհանոցային փառատոն /ՀՀ* Սյունիքի մարզի Սիսիան համայնք/: Փառատոնը հյուրընկալել է ավելի քան 15000 այցելու Հայաստանի տարբեր մարզերից, ինչպես նաև արտասահմանյան երկրներից: 95 տաղավարներում (32 իրանական) փառատոնի մասնակից հայկական և իրանական խոհարարական թիմերը, արհեստագործներն ու արվեստի գործիչները պատրաստել և ներկայացրել են իրենց խոհանոցի բազմազանությունն ու պատմությունը.<br>*«Դիլիջանի արհեստների և արվեստների» համահայկական փառատոն /ՀՀ* Տավուշի մարզի Դիլիջան քաղաք/:Փառատոնը 75 տաղավարով հյուրընկալել է ավելի քան 3000 այցելուի Հայաստանի տարբեր մարզերից:<br>*«**Բացահայտիր Հայաստանը երկնքից**» օդագնացության միջազգային փառատոն* Փառատոնը 6-րդ անգամ է կազմակերպվում: Փառատոնի ընթացքում հոկտեմբերի 12-13-ը իրականացել են թռիչքներ Կոտայքի մարզի Գառնի համայնքում, հոկտեմբերի 14-15-ը՝ Երևան քաղաքի Հանրապետության հրապարակից և հոկտեմբերի 16-ին՝ Ապարանում: Փառատոնին մասնակցել է շուրջ 20 օդապարիկ ՀՀ-ից և արտերկրից՝ Բրազիլիա, Բուլղարիա, Գերմանիա, Ճապոնիա, Մեծ Բրիտանիա, Ռուսաստան, Վրաստան և Ուկրաինա): Օդապարիկներով թռիչքներին հետևել է ավելի քան 7500 մարդ, իսկ փառատոնի մասին դիտելիությունը ֆեյսբուքյան էջում գերազանցել է 1.7մլն | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ***«Արմենիա էյր Ֆեստ»*** *(Armenia AirFest) միջազգային օդային փառատոն* /Կոտայքի մարզի Եղվարդ համայնք/: Փառատոնին մասնակցել են 20 ավիասարքավորումներ և 3 ավիաուսումնական կազմակերպություններ: Փառատոնի ծրագրում ներառված էր օդային շոու ծրագիր՝ փոքր ինքնաթիռների, պարապլանների, օդապարիկների, ուղղաթիռների, սավառնակների ինչպես նաև դրոնների մասնակցությամբ: Ավելի քան 4000 այցելու հետևել են ուղղաթիռներով թռիչքներին և շոուին:<br>***«Միմինո»*** *հայ-վրացական մշակութային-խոհանոցային փառատոն* /Տավուշի մարզի Դիլիջան քաղաք/ Փառատոնին մասնակցել է շուրջ 5000 տեղացի և արտասահմանյան զբոսաշրջիկ: Փառատոնի մշակութային և երաժշտական գոտիների շուրջ 85 տաղավարներում ներկայացվել են երգ ու պար, երաժշտություն, արվեստի գործեր, արհեստագործական աշխատանք, հայկական և վրացական խոհանոցները:<br>*«Արմենիա» երաժշտական միջազգային 8-րդ փառատոնը* կազմակերպվել է «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի կողմից: Փառատոնի ընթացքում կայացել է 5 համերգային ներկայացում՝ հագեցած հայ և արտասահմանյան կոմպոզիտորների ստեղծագործություններով, ապահովվել է ավելի քան 6000 հանդիսատեսի մասնակցություն:<br>***Դիլիջանի գինու փառատոն»*** /Տավուշի մարզի Դիլիջան քաղաք/: Ծրագիրը ներառել էր տարբեր միջոցառումներ՝ այդ թվում վարպետաց դասեր, հարուստ երաժշտական ծրագիր, նկարչություն գինով, կինոդիտում, ավանդական խաղողի ճզման արարողություն, գինու համտես և սաբրաժի սեմինար, մանկական զվարճություններ և այլն: Երկօրյա փառատոնի ընթացքում 6000 հայաստանյան և արտասահմանյան զբոսաշրջիկները հնարավորություն են ունեցել համտեսելու հայկական | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | գինիները, վայելելու հայտնի երաժիշտների կատարումները: Փառատոնին մասնակցել են շուրջ 43 գինեգործական ընկերություններ:<br>*«**Տարազ Ֆեստ**» 6-րդ փառատոն* Երևանի «Հաղթանակ զբոսայգու» տարածքում կազմակերպվել է «Տարազ Ֆեստ» 6-րդ փառատոնը, որն ուղղված է հայ հասարակության և օտարերկրյա զբոսաշրջիկների շրջանում հայկական մշակույթի և տարազի ժողովրդականացմանը: 2-օրյա փառատոնի առաջին հատվածում տեղի է ունեցել շուրջ 50 տաղավարներով ցուցահանդես-տոնավաճառ, որտեղ արհեստագործ վարպետները ներկայացրել են իրենց արտադրանքը: Կազմակերպվել է ցերեկային ցուցադրություն՝ երիտասարդ դիզայներների հավաքածուների ցուցադրություն-մրցույթ, ազգային խաղեր, ուսուցողակրթական ժամանցային ծրագրեր: Փառատոնին մասնակցություն են ունեցել նաև ՀՀ-ում հավատարմագրված դեսպանությունները և ազգային փոքրամասնությունները: Փառատոնի երկրորդ մասում շուրջ 6 դիզայներների հավաքածուներով անցկացվել է ազգային հագուստի ցուցադրություն՝ ժամանակակից ներկայացմամբ:<br>*«**Գարեջրի օրեր**» փառատոն* /Երևան/ Փառատոնը համախմբել է տեղական գարեջուր արտադրողներին և գարեջրի սիրահարներին: փառատոնը հյուրընկալել է շուրջ 30 000 այցելուի:<br><br>***-«Վարդավառ»** փառատոն* /Շիրակի մարզի Գյումրի քաղաք/: Մասշտաբային տոնակատարությունը ունեցել է շուրջ 3000 մասնակից: Ներկայացվել է Վարդավառի տոնածիսական առանձնահատկությունները, հանրայնացվել ազգային-ավանդական մշակույթը<br><br>***«-46C»** ծմեռային փառատոն* /Շիրակի մարզի Ամասիա համայնք/ Փառատոնին մասնակցում էր շուրջ 3000 այցելու: Փառատոնի հիմնական | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | նպատակն էր ներկայացնել Հայաստանի հյուսիսում ձմեռային զբոսաշրջության զարգացման հնարավորությունները և հեռանկարները:<br><br>*Արենի գինու փառատոն* /Վայոց Ձորի մարզի Արենի գյուղ/ Փառատոնին մասնակցել են մոտ 20,000 այցելու ինչպես Հայաստանից այնպես էլ օտարերկրյա զբոսաշրջիկներ:<br><br>Երևան քաղաքի Դիանա Աբգարի անվան զբոսայգում (Սիզընս Պարկ) տեղի է ունեցել **«Ճանաչի՛ր Հայաստանը»** խորագրով ներքին զբոսաշրջային ցուցահանդեսը: Միջոցառման ընթացքում յուրաքանչյուր մարզ ներկայացել է իր տաղավարով՝ այցելուներին հնարավորություն ընձեռելով ծանոթանալու մարզի զբոսաշրջային ներուժին: Բացի մարզային 10 տաղավարներից, առանձին տաղավարով ներկայացվել են նաև Հայաստանի արկածային հնարավորությունները՝ մոտոցիկլետներ, պարապլան, օդապարիկ և այլն: Ցուցահանդեսի շրջանակներում տեղ է ունեցել նաև «Բացահայտելով մարզային զբոսաշրջությունը. Կայուն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման ռազմավարական մոտեցումները» խորագրով համաժողովը, որտեղ տեղացի և միջազգային խոսնակների հետ միասին քննարկվեցին Հայաստանում մարզային և համայնքային զբոսաշրջության զարգացմանն ուղղված արդիական թեմաներ:Միջոցառմանը մասնակցել են ավելի քան 30-40 ընկերություններ և մոտ 5000 այցելու՝ այդ թվում պետական պաշտոնյաներ, դիվանագիտական կառույցների ներկայացուցիչներ:<br>**Աջակցություն Հայաստանում իրականացվող միջոցառումների զբոսաշրջային բաղադրիչին միջոցառման շրջանակներում**<br>Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում կայացել է Զբոսաշրջության տարածաշրջանային համաժողովը | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | (Tourism Regional Forum): Երկօրյա համաժողովը նպատակ ուներ նպաստել տարածաշրջանում զբոսաշրջության զարգացմանը և դառնալ երկխոսության հարթակ տարածաշրջանի երկրների համար, դիրքավորելով Հայաստանը՝ որպես զբոսաշրջության և բիզնես գործընթացների առաջատար վայր տարածաշրջանում: Համաժողովը միավորել էր ՀՀ և տարածաշրջանային պետական և մասնավոր հատվածների ներկայացուցիչներին, միջազգային կազմակերպությունների շահագրգիռ կողմերին, զբոսաշրջության ոլորտի առաջատար մասնագետներին՝ համատեղ քննարկելու զբոսաշրջության միտումները, մարտահրավերները և հնարավորությունները: | | |
| | | | Ապահովվել է ՀՀ Կոտայքի մարզում Գառնիի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի բնականոն գործունեությանը; Կենտրոնը տեղեկատվություն է մատուցել այցելուներին՝ զբոսաշրջային վայրերի, երթուղիների, հյուրանոցային և սննդի օբյեկտների, տրանսպորտային միջոցների և այլնի վերաբերյալ, տպագրել և այցելուներին է տրամադրել բազմալեզու զբոսաշրջային տեղեկատվական բրոշյուրներ, քարտեզներ, իրականացրել է հարցումներ շուրջ 600 զբոսաշրջիկների շրջանում, ապահովել ինտերնետի և հեռախոսակապի ծառայություն, աջակցել մեկ մշակութային միջոցառմանը, իրականացրել սոցիալական էջերի վարում՝ շաբաթական առնվազն մեկ հրապարակմամբ: Կենտրոնի կողմից խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ են ստացել շուրջ 1600 այցելու | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ՄԱՅՍ (MICE՝ Meetings, Incentives, Conferences, Exhibitions) միջոցառման շրջանակներում աջարկություն է ցուցաբերվել 3 միջոցառումների կազմակերպմանը | | |
| | | | **Հայաստանի՝ որպես տարածաշրջանային բժշկական և առողջարանային առաջարկների բազա՝** հիմք ընդունելով Վարչապետի գլխավորությամբ 20.01.2024թ. կայացած խորհրդակցության Արձանագրության Վ/10-2024 2.1 կետի 1.1. ենթակետը՝ ԱՆ 14.05.2024թ. թիվ 2683-Ա հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կազմում ընդգրկվել են Էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի ներկայացուցիչները՝ գույքագրվել են Երևանում գործող բժշկական կազմակերպությունների (այդ թվում ստոմատոլոգիական)՝ առկա հնարավորությունները, *Առողջապահության, Էկոնոմիկայի նախարարությունների, Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի և «Բրիջդ Քորփ» ամերիկյան ընկերության միջև կնքվել է «Հայաստանում բժշկական զբոսաշրջության զարգացման վերաբերյալ» փոխըմբռնման հուշագիր, 02.11.2024թ. կայացել է հանդիպում՝ նվիրված բժշկական զբոսաշրջության խթանմանը:* | | |
| | | 10.6. Օտարերկրյա պետությունների, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն | - ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեն ՄԱԿ Զբոսաշրջության հետ համատեղ Հայաստանում կազմակերպել է ՄԱԿ Զբոսաշրջության Գինու զբոսաշրջության 8-րդ համաշխարհային համաժողովը՝ «Ժառանգություն յուրաքանչյուր շշում. գինու զբոսաշրջության իրական փորձառության ստեղծում» խորագրով: Մասնակիցների ընդհանուր քանակը կազմել է ավելի քան 300, որից շուրջ 100-ը՝ 25 երկրներից: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | - ՀՀ վարչապետի, ՄԱԿ Զբոսաշրջության գլխավոր քարտուղարի, բարձրաստիճան այլ պաշտոնյաների և ներկայացուցիչների մասնակցությամբ 2024 թվականի սեպտեմբերի 12-ին Զբոսաշրջության կոմիտեի կազմակերպմամբ Երևանի Ալեքսանդր հյուրանոցում կայացավ Հայաստանի զբոսաշրջային ներդրումային ուղեցույցի պաշտոնական ներկայացման և հանձնման արարողությունը:<br><br>- Կազմակերպվել է ռուսական առաջատար 20 զբոսաշրջային ընկերությունների և MICE զբոսաշրջության ոլորտի փորձագետների ճանաչողական այցը Հայաստան:<br>Կազմակերպվել է զբոսաշրջային ֆորում, որին հրավիրված միջազգային հինգ փորձագետների մասնակցությամբ կայացել են պանելային քննարկումներ, ինչպես նաև ինտերակտիվ աշխատարաններ:<br>-Ապահովվել է հայկական պատվիրակության մասնակցությունը Իսպանիայի Բարսելոնա քաղաքում կայացած ՄԱԿ Զբոսաշրջության գործադիր խորհրդի 121-րդ և Կոլումբիայի Կարտախենա քաղաքում կայացել է ՄԱԿ Զբոսաշրջության գործադիր խորհրդի 122-րդ նստաշրջանների աշխատանքներին | | |
| | | 10.7. Զբոսաշրջային ծառայությունների որակի բարելավում | ՀՀ էկոնոմիկայի նախարարի՝ 2023թ. դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանով հաստատված «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2024թ. ծրագրի միջոցառումների իրականացման ժամանակացույցի 4-րդ կետի «Ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում» 4.3. ենթակետի («Զբոսաշրջության կրթության բարելավում») կատարման նպատակով՝ ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեի կողմից 2023թ. դեկտեմբերին հայտարարվել է դրամաշնորհի հատկացման մրցույթ: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Արդյունքում մրցույթում հաղթող է ճանաչվել «Մատենա» առաջնորդության և մասնագիտական զարգացման միջազգային դպրոց» ՓԲ ընկերությունը, որի հետ N26-24 պայմանագիրը: «Զբոսաշրջության կրթության բարելավում» միջոցառման շրջանակներում զբոսաշրջության ոլորտը բարձրակարգ կադրերով ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով կազմակերպվել է 5 դասընթաց՝ որից 2-ը՝ «Հյուրընկալության կառավարում» և «Մարքեթինգը բարձրակարգ զբոսաշրջության ոլորտում» Իսպանիայի Լա Ռոշ համալսարանում (3 շրջանավարտ), 2-ը՝ «Զբոսաշրջային գործունեության ռազմավարական պլանավորում և զբոսաշրջային ուղղության կառավարում» և «Զբոսաշրջային ոլորտի առաջնորդների հմտությունների զարգացում ադապտիվ առաջնորդություն» Կիպրոսում «Մատենա» առաջնորդության և մասնագիտական զարգացման միջազգային դպրոցի կողմից (15 մասնակից) և 1 դասընթաց Երևանում «Զբոսաշրջության մասնագետների վերապատրաստման կազմակերպում» թեմայով (34 մասնակից Երևանից և ՀՀ տարբեր մարզերից): Անցկացված 3 դասընթացներին ապահովվել է ավելի քան 50 մասնագետի վերապատրաստում: Իրականացված դասընթացները նպաստել են ոլորտի աշխատակիցների գիտելիքների, հմտությունների և կարողությունների զարգացմանը: | | |
| | | 10.8. Զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացում, «Զբոսաշրջային գյուղ», «Զբոսաշրջային կենտրոն» հայտարարելու | Համաշխարհային բանկի և ՀՀ Կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման» ծրագրի (այսուհետ՝ ՏՏԵԶ Ծրագիր) շրջանակներում 2024 թվականին սույն ենթածրագրերի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | մասին ՀՀ կառավարության որոշման նախագծերի հաստատում | շինարարական աշխատանքներն ավարտվել են սահմանված ժամկետներում.<br>1. Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտայի վերականգնում<br>2. Գյումրի քաղաքի Տերյան և Նալբանդյան փողոցների վերանորոգում<br>3. Գյումրի քաղաքի Խանջյան և Չայկովսկի փողոցների վերանորոգում<br>4. Գյումրի քաղաքի Աճեմյան, Հանեսօղլյան և Ջիվանի փողոցների վերականգնում<br>5. Գյումրիի Սբ.Ամենափրկիչ եկեղեցու հարակից այգու և հարող Աբովյան փողոցի աջ և ձախ հատվածների վերականգնում<br>6. Մարմաշեն վանական համալիր տանող ճանապարհի հիմնանորոգում և տարածքի բարեկարգում<br>7. Գորիս քաղաքի կենտրոնական մասի պատմամշակութային միջավայրի վերականգնում<br>8. Մեղրիի Փոքր Թաղի զբոսաշրջային ենթակառուցվածքների վերականգնում<br>9. Շահումյան փողոցից դեպի ըմպելասրահ տանող ճեմուղու վերանորոգում, բարեկարգում, տաղավարների և տեղեկատվական կենտրոնի կառուցում<br>10. Եղնիկի արձան մոտեցնող ճանապարհի և դիտահրապարակի կառուցում և Գնդեվանքի քայլարշավային արահետի բարեկարգում<br>11. Արենի գյուղի փողոցների բարեկարգում<br>12. Ծաղկունքի կենտրոնական հատվածի բարեկարգում: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ՏՏԵԶ ծրագրի շրջանակներում նաև պետության կողմից իրականացվել է ներդրումների ներգրավում՝ խրախուսելով և օժանդակելով ներդրողներին՝ մասնավորապես ապահովելով անհրաժեշտ ենթակառուցվածքներով համապատասխան տարածքներում: ՏՏԔԶ «Հանրային ենթակառուցվածքների տրամադրում մասնավոր ներդրումների ներգրավման նպատակով» ենթաբաղադրիչով 2024թ. ավարտվել են 4 ենթածրագրերի շինարարական աշխատանքներ.<br>1. «ՋիԲիԷյջ» ՍՊԸ-ի հյուրանոցա-ռեստորանային համալիրը սպասարկող արտաքին ինժեներական ենթակառուցվածքների կառուցում»,<br>2. «Ապագա Տուր» ՍՊԸ-ի հյուրանոցային համալիրի մոտեցնող ճանապարհի և հեռահաղորդակցության գծի կառուցում»,<br>3. «Մայմեխ Ռիզորթ» հանգստի և ժամանցի գոտու սպասարկող արտաքին ինժեներական ենթակառուցվածքների կառուցում»,<br>4. «ԴԻ ՍԻ ԴԻ» ՍՊԸ-ի, Տավուշի մարզ, ք. Դիլիջան Առողջարանային 12/2 և 12/3 –ում «La Valette Resorts» քաղաքային տներով զբոսաշրջային ավանի արտաքին ինժեներական ենթակառուցվածքների ստեղծում»:<br><br>ՏՏԔԶ ծրագրի երեք ենթածրագրեր, որոնք նախատեսված էր ավարտել մինչև 31.12.2024թ., մնացել են անավարտ՝ կապալառու | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կազմակերպությունների կողմից աշխատանքների չիրականացման պատճառով<br>1. «Ջրվեժին մոտեցման ճանապարհի և ճեմուղիների վերականգնում, կամրջակի, ավտոկայանատեղ**ե**ր**ի** և մայթերի կառուցում»,<br>2. «Ջերմուկ քաղաքի Մաշտոցի փողոցի բարեկարգում»,<br>3. «Զորաց քարեր հուշարձանի մերձակա տարածքի բարեկարգում»:<br><br>ՏՏԵԶ Ծրագրով հետազոտական – խորհրդատվական աշխատանքներ<br>• Ծրագրի մոնիթորինգի իրականացում,<br>• Սահմանային անցակետերում միջազգային հետազոտության իրականացում,<br>• Հայաստանի Հանրապետության համար Զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպության (DMO) զարգացման մոդելի մշակում,<br>• Զբոսաշրջային թիրախային ուղղությունների բացահայտում և զարգացման պլաններ (մշակույթ, արկած և բնահենք զբոսաշրջություն, գաստրո և գինի, ագրոզբոսաշրջություն, իրադարձային զբոսաշրջություն, ձմեռային զբոսաշրջություն),<br>• Զբոսաշրջային վայրերի կառավարմա պլանների մշակում (Արենի համայնք, Մարմաշեն վանական համալիր, Գառնու քարերի սիմֆոնիա, Մեղրու փոքր թաղ), | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • Գորիսի զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպության (DMO) հարդարում,<br>• Մարքեթինգային հետազոտություն,<br>• 4 զբոսաշրջային կլաստերի համար զարգացման հայեցակարգերի մշակում. Արենի, Եղեգիս, Գորիս, Դիլիջան,<br>• Թանգարանների նախագծում<br>➢ Դվինում՝ թանգարան և հնագետների հանգրվան,<br>➢ Դաշտադեմում՝ թանգարան և արհեստանոցների փորձառությունների տաղավարներ,<br>➢ Գորիսում՝ Սերո Խանզադյանի տուն-թանգարանի վերանորոգում:<br>**«Զբոսաշրջային գյուղ», «Զբոսաշրջային կենտրոն» հայտարարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծերի** հաստատման» վերաբերյալ հայտնում ենք միջոցառման կատարումն իրատեսական դարձավ Զբոսաշրջության նոր օրենքի ուժի մեջ մտնելուց հետո: ՀՀ էկոնոմիկայի նախարարի՝ 2024 թվականի սեպտեմբերի 6-ի N 2240-Լ հրամանով հաստատվել են զբոսաշրջային կենտրոններ կամ զբոսաշրջային գյուղեր հայտարարելու համար պահանջվող նվազագույն չափանիշները, այդ թվում՝ քաղաքաշինական և բնապահպանական հատուկ նորմերը, զարգացման նպատակները, խնդիրները, միջոցառումները:<br>Ներկայումս ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեի կողմից ուսումնասիրվում են ՀՀ մարզպետների աշխատակազմերից հավաքագրված գյուղերի վերաբերյալ տվյալները: Բացի այդ՝ ՀԲ աջակցությամբ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 2025 թվականից կմեկնարկի «Զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքի բարելավման» ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է ներդնել զբոսաշրջային կլաստերների համակարգ:<br><br>**Զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման շրջանակներում աջակցություն է տրամադրվել 3 զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) բնականոն գործունեությանը՝ ՀՀ Սյունիքի մարզում, Տավուշի մարզում և Դիլիջան քաղաքում գործող DMO-ին:<br>Զբոսաշրջության նոր զբոսաշրջային ուղղությունների ու պրոդուկտների ստեղծման նպատակով, Տավուշի և Սյունիքի մարզերում իրականացվել են նոր առաջարկի ձևավորման աշխատանքներ, մասնավորապես՝<br>Տավուշի մարզում՝ «Վարդան Մամիկոնյանի ծառ» բնության հուշարձանի տարածքի բարեկարգման և Սյունիքի մարզում՝ «Ակսել Բակունցի տուն» թանգարանում տուրիստահաճո (tourist-friendly) միջավայրի ստեղծման համապատասխան աշխատանքներ, իսկ Դիլիջանում՝ մշակվել և տեղադրվել է դեպի տեղեկատվական կենտրոն ուղղորդող 4 ցուցանակ, ինչպես նաև ստեղծվել է 2 նոր՝ գաստրո և արկածային ուղղությամբ զբոսաշրջային պրոդուկտ/երթուղիներ: | | |
| 11 | Որակի ենթակառուցվածքի համակարգի զարգացում | 11.1 Կանոնակարգվող ոլորտներում լաբորատոր կարողությունների զարգացում, մասնավորապես, գործող փորձարկման լաբորատորիաներում որոշ ուղղություններով | Այս միջոցառման իրականացմանն ուղղված գործընթացն ապահովելու նպատակով 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցներից նախատեսվել է խաղալիքների փորձարկման լաբորատորիայի վերազինում, կարողությունների ընդլայնում: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | համապատասխան սարքավորումներով հագեցվածության ապահովում և վերազինում, ՀՀ-ում բացակա լաբորատոր կարողությունների ձևավորում: | Փորձարկման լաբորատորիայի վերազինումը թույլ կտա ողջ ծավալով իրականացնել 3-ից բարձր տարիքային խմբի համար նախատեսված խաղալիքների «Խաղալիքների անվտանգության մասին» Մաքսային միության (ՄՄ ՏԿ 008/2011) պահանջների ամբողջ ծավալով լաբորատոր փորձարկումները, արդյունքում շուկայում ապահովվելու է անվտանգ «խաղալիք» արտադրանքի շրջանառությունը: | | |
| | | 11.2 Արդյունաբերական չափագիտական կարողությունների ձևավորում և զարգացում՝ տրամաչափարկման լաբորատորիաների ձևավորում, գործարկում և զարգացում | • «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ում (այսուհետ՝ ՍՉԱՄ) հիմնված «Ջերմային, ֆիզիկաքիմիական չափումների» և «Զանգվածի և անկյունագծային չափումների» տրամաչափարկման լաբորատորիաների համար ձեռք է բերվել ազգային հավատարմագրում և միջազգային հավատարմագրման գործընթացը սկսելու նպատակով հայտ է ներկայացվել Հունաստանի հավատարմագրման համակարգին (ESYD): Հայտն ընդունվել է և էական անհամապատասխանություններ չեն արձանագրվել:<br>• ՍՉԱՄ-ի կողմից իրականացվել են Վրաստանի չափագիտության ազգային մարմնի հետ երկկողմ միջլաբորատոր համեմատություններ. համեմատություններն ավարտվել են, արդյունքները դրական են.<br>• ԿՕՕՄԵՏ-ի միջոցով իրականացվելիք էտալոնների գրեթե բոլոր համեմատություններին ՍՉԱՄ-ի կողմից մասնակցության պատրաստակամություն է հայտնվել 2023-2025 թվականներին՝ համապատասխան ուղղություններով.<br>• տրամաչափարկման և փորձարկման լաբորատորիաներում և առողջապահության համակարգում ոչ միայն չափման միջոցների | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | չափագիտական սպասարկմամբ, այլև միջլաբորատոր համեմատությունների կազմակերպմամբ չափումների միասնականության ապահովման նպատակով ՍՉԱՄ-ը իրականացրել է անհրաժեշտ աշխատանքները ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17043 «Համապատասխանության գնահատում. Որակավորման ստուգման ընդհանուր պահանջներ» ստանդարտի պահանջներին բավարարելու համար և «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից հավատարմագրվել է որպես միջլաբորատոր համեմատությունների պրովայդեր.<br>• Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով սահմանված և 23.12.2021թ.-ին UNIDO-ի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջև կնքված «Աջակցություն Հայաստանի որակի ենթակառուցվածքին» ծրագրի մեկնարկային փաստաթղթով նախատեսված ևս չորս տրամաչափարկման լաբորատորիաների՝ ուժի և հարակից մեծությունների, քիմիական մեծությունների, էեկտրական մեծությունների, գծային (անկյունագծային) տրամաչափարկման լաբորատորիաների հիմնման ուղղությամբ աշխատանքների հիմնական մասը իրականացվել է, ձեռք են բերվել սարքավորումների գերակշռող մասը:<br>2024 թվականի նոյեմբերի 20-ին կայացել է Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնում հիմնված էլեկտրական մեծությունների, ժամանակի և հաճախականության տրամաչափարկման լաբորատորիայի բացման արարողությունը: Էլեկտրական մեծությունների, ժամանակի և հաճախականության | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | տրամաչափարկման լաբորատորիայի շահառուներն են էներգետիկ, հեռահաղորդակցության, արդյունաբերական, պաշտպանության և ռազմարդյունաբերության, տրանսպորտի և լոգիստիկայի ոլորտների կազմակերպությունները, բժշկական սարքավորումներ արտադրողները, սպասարկողները և կիրառողները, բարձր տեխնոլոգիական արտադրանք արտադրողները: Տրամաչափարկման լաբորատորիաների առկայությունը և արդյունավետ գործունեությունը հնարավորություն կտան Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնին ապահովել Հայաստանում իրականացվող չափումների հետևելիությանը միավորների միջազգային համակարգին՝ աջակցելով արտադրողներին և այլ կազմակերպություններին՝ բարձրացնելու արտադրանքի որակն ու վստահելիությունը, համապատասխանելու ազգային և միջազգային ստանդարտներին: Այն նաև կնպաստի արտահանման ընդլայնմանը, արդյունաբերական գործընթացների կատարելագործմանը և նորարարությունների ներդրմանը՝ արդյունքում խթան հանդիսանալով միջազգային առևտրի դիվերսիֆիկացման և երկրի տնտեսական զարգացմանը: | | |
| | | 11.3 Համապատասխանության գնահատման և հավատարմագրման կարողությունների զարգացում՝ թիրախ սահմանելով հավատարմագրման | • Հավատարմագրման ոլորտում միջազգային և տարածաշրջանային հավատարմագրման համակարգերին ինտեգրման նպատակով «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԱՐՄՆԱԲ) ներկայացուցիչները մասնակցել են Հավատարմագրման Եվրոպական Համագործակցության (EA) Սերտիֆիկացման և հսկողություն իրականացնող մարմինների կոմիտեի, Լաբորատորիաների կոմիտեի, | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ազգային մարմնի միջազգային ճանաչմանն ուղղված բազմակողմ ճանաչման համաձայնագրերի կնքումը տարածաշրջանային և միջազգային հավատարմագրման կազմակերպությունների հետ (EA, ILAC, IAF): | Բազմակողմ Ճանաչման (MAC) համաձայնագրերի խորհրդի նիստերին, ինչպես նաև Հավատարմագրման Եվրոպական Համագործակցության հերթական Գագաթնաժողովի աշխատանքներին:<br>• ԱՐՄՆԱԲ-ի ներկայացուցիչները մասնակցել են Գերմանիայի չափագիտության մարմնի (PTB) ներկայացուցիչների կողմից կազմակերպված «ISO 17025 Փորձարկման և տրամաչափարկման լաբորատորիաների իրազեկությանը ներկայացվող ընդհանուր պահանջներ», «ISO 15189:2022 Բժշկական լոբորատորիաներ. Որակին և իրազեկությանը ներկայացվող պահանջներ», «ISO 37001:2016 Հակակաշառակերության կառավարման համակարգեր» ստանդարտների պահանջներին համապատասխան վերապատրաստման դասընթացներին, մի շարք տեխնիկական կանոնակարգերի նախագծերի քննարկմանը:<br>• Հավատարմագրված և հավատարմագրմանը հավակնող համապատասխանության գնահատման մարմինների մասնագետների համար ԱՐՄՆԱԲ-ը կազմակերպել է դասընթացներ՝ «ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2019 ստանդարտի և EA, ILAC փաստաթղթերի պահանջները», «ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17065-2013 ստանդարտի և EA, IAF փաստաթղթերի պահանջները», «ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17021-1-2015 ստանդարտի և EA, IAF փաստաթղթերի պահանջները» թեմաներով վերապատրաստման դասընթացներ:<br>• Միջազգային աուդիտորների կողմից իրականացվել է ԱՐՄՆԱԲ-ի ներքին աուդիտ, որի արդյունքների հիման վրա կազմվել է ուղղիչ գործողությունների ծրագիր և սահմանվել են ժամկետներ անհամապատասխանությունները վերացնելու համար: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | • EA-ի հետ բազմակողմ ճանաչման համաձայնագիր կնքելու նպատակով 2024 թվականի դեկտեմբերին EA-ի գնահատման խմբի կողմից իրականացվել է ԱՐՄՆԱԲ-ի նախնական տեղում գնահատումը: Արձանագրվել են դրական արդյունքներ: EA-ի փորձագիտական խմբի կողմից ամբողջական գնահատումը նախատեսվում է իրականացնել 2025 թվականին:<br>• Էլեկտրոնային հավատարմագրման գործընթացի (e-accreditation) ավտոմատացման համակարգը գործարկելու և տեխնիկական սպասարկումն ապահովելու նպատակով հայտարարվել է մրցույթ: | | |
| | | 11.4 ՀՀ-ում գործող տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի և ստանդարտների վերանայում, ԵԱՏՄ նոր մշակվող տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի եւ ստանդարտների մշակմանը մասնակցություն, արտադրանքի անվտանգության ապահովման նպատակով նոր տեխնիկական կանոնակարգերի մշակում և համակարգում | 1. ԵԱՏՄ շրջանակներում իրականացվել են՝ ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսությունների կայունության բարձրացմանն ուղղված միջոցառումների շրջանակներում հայկական կողմի դիրքորոշման ներկայացում թվով 24 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի, դրանց կիրարկումն ապահովող ստանդարտների, համապատասխանության գնահատման ընթացակարգերի, ԵԱՏՄ արտադրողների լիազոր ներկայացուցիչներ ներառելու ընթացակարգերի նախագծերի, ինչպես նաև, թվային տեխնիկական կանոնակարգման վերաբերյալ:<br>• ՀՀ կողմից մշակվող «Նիկոտին պարունակող արտադրանքի մասին տեխնիկական կանոնակարգ» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի նախագծի մշակմանն ուղղված ընթացակարգերի ապահովում, ներառյալ՝ նախագծի լրամշակում և ամփոփում ԵԱՏՄ շրջանակներում հանրային քննարկման արդյունքներով, աշխատանքային խմբի նիստի կազմակերպում 2024 թվականի հուլիսի 15-18-ը, չափագիտական փորձաքննության եզրակացության կազմում, | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ամբողջ փաթեթի լրամաշակում և ներկայացում ԵՏՀ՝ ԿԱԳ անցկացնելու և ներպետական համաձայնեցման ներկայացնելու նպատակով:<br>2. ՀՀ շրջանակներում իրականացվել են՝ «Տեխնիկական կանոնակարգման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ներկա փուլում համաձայնեցման է ներկայացվել շահագրգիռ կողմերին և Արդարադատության նախարարությանը,<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 5-ի «Ծխախոտի անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 540-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 219-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որը ներկայացվել է շահագրգիռ կողմերին,<br>«Վտանգավոր արտադրանքի կամ արտադրանքի խմբաքանակի իրացման կասեցման, հետկանչման, ոչնչացման, օգտահանման ենթակա ապրանքների ցանկը, հիմքերը, դեպքերը և կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որը ներկայացվել է ՀՀ կառավարություն և լրամշակման փուլում է ՖՏԿ նիստի արդյունքներով:<br>Ամբողջությամբ վերանայվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել են հետևյալ իրավական ակտերը.<br>1. ՀՀ կառավարություն 2024 թվականի հոկտեմբերի 10-ի N 1603 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի N 607-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | (Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին) որոշում,<br>2. ՀՀ կառավարություն 2024 թվականի մայիսի 30-ի N 785-Ն «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 9-ի N 1010-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (Մաքսային մարմինների կողմից տեխնիկական կանոնակարգերով նախատեսված համապատասխանության պարտադիր գնահատման ենթակա արտադրանքի մասին տեղեկատվությունը ներկայացնելու կարգը հաստատելու մասին) որոշում,<br>3. ՀՀ կառավարություն 2024 թվականի մայիսի 30-ի N 779-Ն «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 22-ի N 1010-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» (Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառության թույլատրված քաղաքացիական և ծառայողական զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների վերաբերյալ տեղեկությունների պետական կադաստրի վարման կարգը հաստատելու մասին) որոշում,<br>4. ՀՀ կառավարություն 2024 թվականի օգոստոսի 1-ի N 1173-Ն «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 10-ի N 155-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (Ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին) որոշում: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 11.5 Որակի ենթակառուցվածքի համակարգի բաղկացուցիչ ոլորտների՝ բարեփոխման ռազմավարության մշակում և ՀՀ կառավարության կողմից հաստատում | Եվրոպական միության (ԵՄ) կողմից ֆինանսավորվող և Միավորված ազգերի կազմակերպության Արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) համակարգմամբ իրականացվող «Աջակցություն Հայաստանում որակի ենթակառուցվածքներին» ծրագրի շրջանակներում՝<br>1. կազմակերպվել են հանդիպումներ և այցեր Օրենսդրական ՉՄԿ և ՉԿՄԲ (OIML, BIPM) պաշտոնատար անձանց հետ Էկոնոմիկայի նախարարության աշխատակիցների մասնակցությամբ՝ նշված կազմակերպություններին Հայաստանի՝ ի դեմս ՍՉԱՄ-ի անդամակցության և CIPM/ԿՉՄԿ-ի չափումների և էտալոնների փոխադարձ ճանաչման համաձայնագրին միանալու հեռանկարները հստակեցնելու նպատակով: Իրականացվել է Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության և կշռի և չափի միջազգային բյուրոյին անդամակցության ծախսեր-արդյունք վերլուծություն: Վերլուծությունը ներկայացվել է շահագրգիռ հանրային մարմիններին և որոշվել է նշված կառույցներին որպես թղթակից և ասոցացված անդամ անդամակցելու արդյունավետությունը: Ներպետական ընթացակարգերն իրականացնելու նպատակով նախարարության կողմից մշակվել, շահագրգիռ մարմիններին կարծիքի է ներկայացվել անդամակցության ուղղված փաստաթղթի նախագիծը, որը համալրվել է շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված եզրակացություններով և ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ.<br>2. ԵՄ փորձագետի կողմից ՀՀ օրենսդրություն-եվրոպական լավագույն փորձ համեմատական վերլուծության հիման վրա էկոնոմիկայի | «2024թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ կառավարություն ներկայացում» միջոցառման կատարումն ապահովելու նպատակով ԵՄ փորձագետի կողմից ազգային օրենսդրություն-եվրոպական փորձի համեմատական վերլուծության հիման վրա կազմվել և 2024 թվականի 2-րդ կիսամյակում նախարարության քննարկմանն է ներկայացվել Որակի ենթակառուցվածքի համակարգի բաղկացուցիչ ոլորտների բարեփոխման ռազմավարության նախագիծը: Հիմք ընդունելով որակի ենթակառուցվածքի բաղկացուցիչ ոլորտների ներկայացուցիչների հետ քննարկման արդյունքները, ինչպես նաև հաշվի առնելով | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | նախարարության կողմից մշակվել է «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը համաձայնեցվել է շահագրգիռ մարմինների հետ և ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:<br>3. Իրականացվել է Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության հիմնարար փաստաթղթերի հայերեն թարգմանություն, որում ներառված չափանիշները, մոտեցումները ևս ներառվել են ռազմավարության նախագծի օրենսդրական չափագիտության բաղադրիչի մեջ:<br>4. ԵՄ փորձագետի կողմից ՀՀ օրենսդրություն-եվրոպական լավագույն փորձ համեմատական վերլուծության հիման վրա կազմվել և նախարարության քննարկմանն է ներկայացվել Որակի ենթակառուցվածքի համակարգի բաղկացուցիչ ոլորտների բարեփոխման ռազմավարությունը, որը բազմիցս քննարկվել է որակի ենթակառուցվածքի բաղկացուցիչ ոլորտների, շուկայի վերահսկողության ներկայացուցիչների հետ: Ներկա պահին այն ներկաացվել է ԵՄ փորձագետին լրամշակման՝ ձևավորված կարծիքների ներքո: | այն, որ Նախագիծը չէր ներառել Որակի ենթակառուցվածքի համակարգի զարգացմանն ուղղված ռազմավարական նպատակների համար իրատեսական, որակական և քանակական արդյունքային ցուցանիշներ, որոնք հետագայում կարող են հիմք հանդիսանալ ծրագրերի նպատակների չափման, առաջընթացի և արդյունավետության գնահատման համար, ինչպես նաև առկա էին ընդհանրական, անորոշ, ոչ հստակ բնույթի արտահայտություն ներ, ուստի այն վերադարձվել է վերախմբագրման ԵՄ փորձագետին:<br>ԵՄ փորձագետի կողմից նախագծի լրամշակված տարբերակը դեռևս չի ներկայացվել նախարարությանը: Ներկա պահին ռազմավարության | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | նախագծի խմբագրման նպատակով ակտիվ քննարկումներ են տեղի ունենում նախարարության, Միավորված ազգերի կազմակերպության Արդյունաբերական զարգացման կազմակերպության և ԵՄ փորձագետի հետ: | |